

ՆԱՅԵՐՆ ԱՅՍՕՐ

113

ՀՀ ՍՓՅՈՒՐՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ

Քաղաքականություն

Մոսկվայում տեղի կունենա «Հայոց գեղասպանությունն ոճրագործության է մարդկության դեմ» հանրահավաքը

Սփյուռքի նախարարն ու Ուկրաինայի դեսպանը քննարկեցին հայոց լեզվի պահպանման խնդիրը Ուկրաինայում

Հիլդա Չորոյան. Ֆրանսիայի Մենատր չի կարողանա րնդունել Հայոց գեղասպանության ժխտումը քրեականացնող օրենքը

Երիտանացի խորհրդարանականները համոզում են իրենց կառավարությանը ճանաչել Հայոց գեղասպանությունը

ՀՀ սփյուռքի նախարարություն

ՀՀ Սփյուռքի նախարարը րնդունեց Տեղահանվածների և բռնադատվածների եվրոպական միության դեկլարարին

ՀՀ սփյուռքի նախարարությունն այցելեց ՀԲԸՄ Մոնդեվիդեյի «Կռունկ» երգսախում

ՀՀ սփյուռքի նախարար Հրանտոջ Հակոբյանն րնդունեց «Արի տուն» ծրագրի հյուրընկալ րնտանիքների Գերմանիա մեկնող երիտասարդներին

«Ցավի, հիշողության եւ պայքարի կոթողներ» պատկերագիրը ներկայացնում է Հայոց գեղասպանության հուշարձաններն աշխարհում

ՀՀ սփյուռքի նախարարությունում տեղի ունեցավ «Ցավի, հիշողության եւ պայքարի կոթողներ» պատկերագրի շնորհանդեսը

Սփյուռքի նախարարությունում քննարկվել են Լիբանանի հայ երիտասարդության հիմնախնդիրներին առնչվող հարցեր

ՀՀ սփյուռքի նախարարությունում կայացավ հայ լրագրողների 5-րդ համաժողովի գործադիր մարմնի նիստ

ՀՀ սփյուռքի նախարարությունում կայացավ մամուլի ասուլիս՝ ի պատասխան Թ.Պողոսյանի անհիմն «մեղադրանքների»

Հրանտոջ Հակոբյանը և Ֆրանսիայի խորհրդարանի պատգամավոր Ռենե Ռուբեն քննարկել են հայ-ֆրանսիական հարաբերությունները

Ֆրասահայ բարերար Սարգիս Բեդոյանը պարգևատրվեց «Պողոս Նուբար» մեդալով

Սփյուռքի նախարարությունը պատասխանում է Թամար Պողոսյանի անհիմն մեղադրանքներին

Սփյուռք

Ռումինիայում հարգանքի տուրք մատուցեցին Հայոց գեղասպանության զոհերի հիշատակին

Մտամբույում Հայոց գեղասպանության զոհերի հիշատակին ակցիա է րնթանում

Մինսկի հայ համայնքը հարգանքի տուրք է մատուցել Հայոց գեղասպանության զոհերի հիշատակին

Միմոն Այնեօյան. Աշխարհի մնացած երկրները պետք է հետևեն Գիպրոսի օրինակին և ճանաչեն Հայոց գեղասպանությունը

Երուսաղեմի հայերը Թուրքիայից պահանջում են ճանաչել Հայոց գեղասպանությունը

Ապրիլի 24-ին և 25-ին Բերլինում տեղի կունենան Հայոց գեղասպանության 96-ամյակին նվիրված միջոցառումներ

Իսպանիայում հարգանքի տուրք են մատուցել Հայոց գեղասպանության զոհերի հիշատակին

Վրաստանի հայերը բողոքի ակցիա են անցկացրել Թբիլիսիում Թուրքիայի դեսպանատան դիմաց

Ուրուգվայի հայ համայնքը հարգանքի տուրք է մատուցել Հայոց գեղասպանության զոհերի հիշատակին

Եվրոպայի հայերի համագումար. Միջազգային հանրությունն այլևս մտադիր չէ լքել Հայոց գեղասպանության մասին

Ապրիլի 24-ին Գիեում երկու խաչքար կօծեն

Ապրիլի 25-ին Գիպրոսի հայ համայնքը երթ կանցկացնի՝ նվիրված Հայոց գեղասպանության զոհերի հիշատակին

Կալիֆորնիայի հայերն անցկացրել են «Օբամա, կատարիր խոստումդ և ճանաչիր Հայոց գեղասպանությունը» ակցիան

Աբխազիայի վարչապետը համագործակցություն է խոստանում հայերին

Ադալանական այդ տոնը Բոլնիս- Խասենում

Հայկական Վիրտուալ Համալսարանի հիմնադիր նախագահ պրոֆեսոր Երվանդ Զորյանը Թբիլիսիում

Կոնգրեսական Էդ Ռոյսը հավաստիացրել է ԱՄՆ հայ համայնքին, որ կշարունակի սատարել նրան

Բերլինում երեք հայկական ավանդական կուսակցությունները կնշեն Հայոց գեղասպանության 96-րդ տարելիցը

“Հայոց գեղասպանությունը 1914-18թթ. Վրացական պարբերականներում” գրքի շնորհանդեսը Թբիլիսիում

Թբիլիսիում նշել են հայ բարերար Ալեքսանդր Մանթաշովի մահվան 100 տարին

Ապրիլի 19-ին հոլանդահայերը Հաագայում ցույց անցկացրեցին Հայոց գեղասպանության 96-րդ տարելիցի կապակցությամբ

Չեխիայի հայ համայնքը կոգեկոչի Հայոց գեղասպանության զոհերի հիշատակը

Նիդերլանդներում տոնել են «Միացյալ հայերը Հոլանդիայում» միության և «Վան» կիրակնօրյա դպրոցի 10-ամյակը

Ապրիլի 16-ին հունահայ երիտասարդությունը բողոքի ցույց անցկացրեց Աթենքում Թուրքիայի դեսպանատան դիմաց

Ապրիլի 23-ին Լոնդոնում՝ Օբսֆորդ սթրիթում, տեղի կունենա Հայոց գեղասպանության զոհերի հիշատակի երթ

Ֆրանսիայի հայ համայնքը նախագահ Սարկոզիին մեղադրում է դավաճանության մեջ

[Հասարակություն](#)

1.5 միլիոն ծառ, 1.5 միլիոն նահատակ

[Լրացավ մեծանուն հայ լրագրող Հարություն Փարիկյանի 100-ամյակը](#)

[Ուկրաինայում բազմաթիվ միջոցառումներով կհարգեն Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը](#)

[Ռուսաստանի հասարակությունը հարգանքի տուրք կմատուցի Հայոց ցեղասպանության զոհերին](#)

[The Financial Times. Կոտորածը Դիարբեթի նահանգում սատանայական մասշտաբների է հասել](#)

[Մշակույթ](#)

[Պատմաբան Ռայմոնդ Կեռկյանը ներկայացնում է «Հայոց ցեղասպանություն. Սևրոթական պատմություն» գիրքը](#)

[Թրիխտի հայկական թատրոնը կվերանորոգվի վրացական պետության միջոցներով](#)

[Թուրք դերասանուհին խաղացել է Մեծ Եղեռնի մասին հայկական ֆիլմում](#)

[Բերուրի «Վահե Սեթյան» հրատարակչությունն առաջին անգամ մասնակցում է Գրքի երևանյան տոնավաճառին](#)

[Լուսին Դինոյ ֆիլմ կնկարահանի Վիլյամ Սարոյանի մասին](#)

[Բրատիսլավայում կլուսնիկ պատարագ է մատուցվելու՝ նվիրված Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին](#)

[Հայ կատարողներով թուրքական երգչախումբը կարող է արժանանալ 2012-ի Խաղաղության Նոբելյան մրցանակի](#)

[ԱՄՆ-ում կրացվի ամերիկահայ նկարիչ Արթուր Փինասյանի անհատական ցուցահանդեսը](#)

[Սպրիլի 24-ի նախաշեմին Թուրքիայում լույս կտեսնի Վերժինե Սվազյանի գիրքը Մեծ Եղեռնի մասին](#)

Քաղաքականություն

Մոսկվայում տեղի կունենա «Հայոց ցեղասպանությունն ոճրագործության է մարդկության դեմ» հանրահավաքը

2011-04-21

Հանրահավաքի նպատակն է դատապարտել Հայոց ցեղասպանությունն ու Թուրքիայից պահանջել պաշտոնապես ճանաչել այն: Հանրահավաքի կազմակերպիչներն են «Ռուս-հայկական համագործակցությունը» և «Ռուսաստանի հայերի միությունը»:

Հանրահավաքում ելույթ կունենան ՌԴ Պետդումայի պատգամավորներ, ՌԴ ազգային համայնքների ղեկավարներ, վերլուծական ինստիտուտների ներկայացուցիչներ: Հանրահավաքի անցկացումը համաձայնեցված է Մոսկվայի քաղաքապետարանի հետ:



Սփյուռքի նախարարն ու Ուկրաինայի դեսպանը քննարկեցին հայոց լեզվի պահպանման խնդիրը Ուկրաինայում

2011-04-21

Ողջունելով հյուրին՝ Հ.Հակոբյանը ներկայացրեց ՀՀ սփյուռքի նախարարության գործունեությունն ու ծրագրերը:

Քննարկվեցին փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցեր, այդ թվում նաև Ուկրաինայում հայ համայնքի և Հայաստանի Հանրապետությունում ուկրաինական համայնքի

հիմնախնդիրներին: Մասնավորապես հարց բարձրացվեց «Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի» շրջանակներում Ուկրաինայում պահպանվող լեզուների շարքում հայոց լեզուն ընդգրկելու մասին:

Պայմանավորվածություն ձեռք բերվեց առաջիկայում համատեղ աշխատանքներ իրականացնել Հայաստանի Հանրապետությունում Ուկրաինայի հայ համայնքի օրեր կազմակերպելու մասին:



Հիլդա Չոբոյան. Ֆրանսիայի Սենատը չի կարողանա ընդունել Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրենքը

2011-04-19

Այդ մասին PanARMENIAN.Net ի թղթակցի հետ զրույցում հայտարարել է Եվրոպայի Հայկական դաշնության նախագահ (EAFJD) Հիլդա Չոբոյանը: «Նախագահը, կառավարությունն ու Սենատի մեծամասնությունը դեմ են օրենքին, սակայն մենք չենք կարող ձեռքներս ծալած նստել, հայ համայնքը կշարունակի օրինագիծը Սենատի օրակարգում ընդգրկելուն ուղղված ջանքերը»,- ասել է նա:

Օրենքի ընդունման նախաձեռնողը սոցիալիստների խմբակցությունն է, որը 2006թ. Ֆրանսիայի Ազգային ժողովի կողմից ընդունված նմանատիպ օրինագծի հեղինակն էր:

Նախօրեին թուրքական ԶԼՄ-ները տեղեկություններ էին տարածել այն մասին, որ Ֆրանսիայի Սենատի Սահմանադրական կոմիտեն հավանություն չի տվել օրինագծին:



Բրիտանացի խորհրդարանականները համոզում են իրենց կառավարությանը ճանաչել Հայոց ցեղասպանությունը

2011-04-19

«Իմ զգացմունքները միշտ ձեր ժողովրդի հետ են: Մենք հիշում ենք 1915 թ. սարսափելի ու ողբերգական իրադարձությունները: Ինձ համար շատ հաճելի է, որ այսօր Հայաստանում ինձ հետ են և Լորդերի պալատի, և Համայնքների պալատի ներկայացուցիչները, ովքեր ներառված են բրիտանահայկական համակուսակցական խմբում: Մեզ համար շատ կարևոր է, որ մենք ոչ միայն Հայաստանում ենք, այլև մի նշանակալի վայրում, որը խորհրդանշում է այդ ողբերգական իրադարձությունները»,- Հայոց Մեծ Եղեռնի զոհերի հիշատակին ծաղիկներ դնելուց հետո նշեց բարոնուհի Քոքսը:

Լորդ Լինդոն Հարիսոնը, ով առաջին անգամ էր Հայաստանում, նշեց, որ բազմաթիվ երկրներում է այցելել ժողովուրդների հիշատակին նվիրված հուշահամալիրներ, սակայն այն, ինչ տեսավ Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում և Ցեղասպանության թանգարանում, ամենատպավորիչն էր:

«Մեր խորհրդարանական խումբը շատ մեծ ջանքեր է գործադրում, որպեսզի իրազեկի մարդկանց, թե ինչ է Հայոց Ցեղասպանությունը, ինչ է տեղի ունեցել, քանզի շատ-շատերն իսկապես տեղյակ չեն դրանից: Փորձում ենք համոզել բրիտանական կառավարությանը, որպեսզի, եթե հնարավոր է, երբեմն ճանաչվի Հայոց Ցեղասպանությունը»,- հայտարարեց Բարոնուհի Շրիլա Ֆլեդերը: Իսկ տիկին Շիլան առաջիկայում հնարավորություն տեսնում է, որ Մեծ Բրիտանիան պաշտոնապես ընդունի ու ճանաչի Հայոց Ցեղասպանությունը հարցադրմանը ի պատասխան նա ասաց. «Շարժումը կա, առաջ ենք գնացել: Բայց դեռ առկա են շատ ու շատ հարցեր...»:

Համայնքների պալատի անդամ Ջոն Ուիթինգդեյլն ընդգծեց, որ ինչպես շատերը Բրիտանիայում, այնպես էլ ինքը տեղյակ չի եղել Հայոց Ցեղասպանությունից և այդ իմաստով նա կարելու էր այդ Ծիծեռնակաբերդի հուշահամալիր և Ցեղասպանության թանգարան: «Պետք է այնպես անել, որ

նման դեպքերը երբեւէ չկրկնվեն: Ես տիկին Քոքսի հետ մեկնելու եմ Ղարաբաղ, որպեսզի իմ աչքով տեսնեմ, թե ինչ է կատարվում այնտեղ, որպեսզի վերադառնանք Բրիտանիա եւ կարողանանք ասել, թե ինչ է իրականում այնտեղ տեղի ունենում», - ասաց Համայնքների պալատի ներկայացուցիչը, հաղորդում է ՀՀ ԱԺ հասարակայնության եւ տեղեկատվության միջոցների հետ կապերի վարչությունը:

ՀՀ սփյուռքի նախարարություն

ՀՀ Սփյուռքի նախարարը ընդունեց Տեղահանվածների և բռնադատվածների Եվրոպական միության ղեկավարին

2011-04-23

Այցի ընթացքում քննարկվեցին փոխադարձ հետաքրքրություն ներակայցնող հարցեր, ինչպես նաև «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հետ կնքվող պայմանագրի դրույթները: Քննարկում կայացավ նաև Ադրբեջանից տեղահանված հայ փախստականների շահերը ներկայացնող հ/կ-ների ներկայացուցիչների հետ:

Վաղը պատվիրակությունը Ծիծեռնակաբերդում կմասնակցի Հայոց Ցեղասպանության զոհերի ոգեկոչման արարողությանը, իսկ հետո կմեկնի Լեռնային Ղարաբաղ:



ՀՀ սփյուռքի նախարարություն այցելեց ՀԲԸՄ Մոնդելիդեյի «Կռունկ» երգչախումբ

2011-04-22

Ողջունելով երգչախմբի այցը՝ ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը ներկայացրեց նախարարության գործունեության հիմնական ուղղություններն ու առաջիկա ծրագրերը՝ ուղղված Սփյուռքում հայապահպանության, մասնագիտական ներուժի համախմբման և հայրենադարձության խնդիրներին:

Հ.Հակոբյանն անդրադարձավ «Հարավային (Լատինական) Ամերիկայի հայ համայնքների կրթամշակութային հիմնախնդիրների լուծմանն աջակցության» ծրագրի շրջանակներում իրականացվող աշխատանքներին, որոնց նպատակն է օժանդակել տարածաշրջանի հայության հայեցի կրթությանն ու դաստիարակությանը:

Նախարարն ընդգծեց հայ համայնքի մեծ դերակատարությունն Ուրուգվայի կողմից առաջինն աշխարհում Հայոց Ցեղասպանության փաստը ճանաչելու և այն դատապարտելու գործում:

Հ.Հակոբյանը շեշտեց համահայկական կարևորագույն հիմնախնդիրների լուծման գործում Հայրենիքի և Սփյուռքի միասնականության անհրաժեշտությունը:

Շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար՝ երգչախմբի անդամներն արտահայտեցին իրենց անսահման ոգևորությունն ու երջանկությունը Հայրենիքում գտնվելու կապակցությամբ և պատրաստակամություն հայտնեցին բոլոր հնարավոր միջոցներով աջակցել Հայրենիքից հեռու իրենց համայնքում հայկական ազգային ավանդույթները, լեզուն և մշակույթը պահպանելուն ուղղված՝ ՀՀ սփյուռքի նախարարության ծրագրերի իրականացմանը:

Ապրիլի 26-ին Երևանի «Առոտ Բաբաջանյան» համերգասրահում (Հայաստանի պետական ֆիլիարմոնիայի փոքր դահլիճում) և ապրիլի 28-ին Գյումրիի Արվեստների ակադեմիայի համերգասրահում ՀՀ սփյուռքի նախարարության աջակցությամբ տեղի կունենան «Կռունկ» երգչախմբի համերգները: Երգչախմբի հյուրախաղերը մաս են կազմում Հայաստանի Հանրապետության անկախության 20-ամյակին նվիրված միջոցառումների:




ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանն րնդունեց «Արի տուն» ծրագրի հյուրընկալ րնտանիքների Գերմանիա մեկնող րիտասարդներին

2011-04-22

Ողջունելով ներկաներին և հաջողություն մաղթելով ծրագրին՝ նախարար Հ.Հակոբյանը նշեց, որ այն կարելի է համարել «Արի տուն» ծրագրի շարունակություն: Զրուցելով Գերմանիա մեկնող յուրաքանչյուր երիտասարդի հետ՝ նախարար Հ.Հակոբյանը խորհուրդ տվեց Սփյուռքում անցկացնելիք օրերի ընթացքում դրսևորել օրինակելի վարքագիծ, քանի որ նրանք ներկայացնում են ոչ միայն իրենց ընտանիքը, դպրոցը կամ համայնքը, այլ նաև ՀՀ սփյուռքի նախարարությունը և, որ ամենակարևորն է՝ Հայաստանի Հանրապետությունը:

Ապրիլի 23-30-ը Գերմանիայի Դաշնային Հանրապետություն մեկնող յոթ երիտասարդներից հինգը Երևան քաղաքից են, իսկ երկուսը՝ Քասախ գյուղից: Երիտասարդները կհյուրընկալվեն Հեսսենի «Հայ մշակութային միության» ներկայացուցիչների ընտանիքներում: Նրանք կմասնակցեն մի շարք մշակութային միջոցառումների (այցելություններ մշակութային հաստատություններ, ֆիլմի դիտում և այլն), իսկ ապրիլի 24-ին կմասնակցեն նաև Հայոց Յեղասպանության տարելիցի կապակցությամբ Ֆրանկֆուրտում կազմակերպվող երթին:

Երիտասարդներին հաջողություններ մաղթեց և այցի հետ կապված կազմակերպչական հարցերի շուրջ նրանց հետ զրուցեց նաև ՀՀ սփյուռքի նախարարության աշխատակազմի ղեկավար Ֆիրդուս Զաքարյանը:



«Ցավի, հիշողության եւ պայքարի կոթողներ» պատկերագիրը ներկայացնում է Հայոց ցեղասպանության հուշարձաններն աշխարհում

2011-04-21

Աշխատության շնորհանդեսի ժամանակ այսօր ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը նշեց, որ պատկերագիրը վկայում է Սփյուռքի կազմակերպությունների, անհատների՝ Հայ դատի պայքարին հավատարմության մասին: Այն նաև երախտագիտության յուրօրինակ արտահայտություն է պետական եւ տեղական իշխանություններին, որոնք նպաստել են իրենց երկրում, համայնքում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշարձանների եւ համալիրների ստեղծմանը:

Նախարար Հ.Հակոբյանի խոսքերով՝ Հայոց ցեղասպանությունը թուրքական իշխանությունների կողմից մտածված, մանրագնին ծրագրված եւ սառնասրտորեն իրագործված հրեշագործություն է, որը սկիզբ է առել 19-րդ դարի90-ականներին, իր գագաթնակետին հասել 1915թ.-ին, շարունակվել մինչև 1923թ.-ը: Այդ տարիներին ավելի քան երկու միլիոն հայ է նահատակվել: Վիճակագրական տվյալների համաձայն՝ կոտորվել է 66 քաղաքների եւ 2500 գյուղերի հայ բնակչությունը:

Ավերվել եւ թալանվել է մոտ 1500 դպրոց ու վարժարան, 2050 եկեղեցի, 300 վանք, ոչնչացվել 20 հազար ձեռագիր մատյան: Գաղթական են դարձել եւ բռնի կրոնափոխ արվել հարյուր հազարավոր հայեր: Հ.Հակոբյանը նկատեց, որ Հայոց ցեղասպանության ծրագրին զուգընթաց թուրքերն իրականացրել են նաև հայության հոգևոր սպանողը: Վերացվել եւ այսօր էլ վերացվում են հայկական հոգևոր-մշակութային արժեքները, որոնք հայ ժողովրդի՝ Բիբլիական երկրի տեղը լինելու վկայություններն են:

Ներկայում եւս հետեւողականորեն թուրքացվում են Արեւմտյան Հայաստանի հայկական վերջին անվանումները, ավերվում հայկական մշակույթի հուշարձանները, խեղաթյուրվում եւ կեղծվում է պատմությունը: «Այս գիրքը յուրօրինակ ապտակ է պատմության կեղծարարներին, բոլոր նրանց, ովքեր ժխտում են Հայոց ցեղասպանությունը», -ընդգծեց նախարարը՝ շնորհակալություն հայտնելով սփյուռքի հայկական կազմակերպություններին, դիվանագիտական ներկայացուցչություններին՝ հրատարակության լույս ընծայմանն աջակցության համար:

Պատկերագրքում ներկայացված են 288 հուշակոթողների լուսանկարները, դրանց մասին հակիրճ տեղեկություններ: Երեւանի պետական համալսարանի Հայոց պատմության ամբիոնի վարիչ Բաբկեն Հարությունյանի խոսքերով՝ աշխատությունը կամուրջ է սփյուռքահայության եւ հայրենիքի միջեւ, դատավճիռ՝ Արեւմտյան Հայաստանում եւ ողջ Օսմանյան կայսրության տարածքում Հայոց ցեղասպանության ոճրագործների նկատմամբ: Պատմաբանը ընդգծեց տարբեր ձեռնարկներով դրսում հայանպաստ կարծիք ձեւավորելու կարեւորությունը, առաջարկեց պատկերագիրքը լույս ընծայել տարբեր լեզուներով, այդ թվում՝ թուրքերեն:

«Պետք է ճանաչվեն Հայոց ցեղասպանությունն ու հայ ժողովրդի իրավունքները եւ թուրքերը պետք է հատուցեն իրենց կատարած ոճրագործության համար», -նշեց պատմաբանը: Նրա առաջարկին՝ աշխատության մեջ ներառել նաեւ գրքի քարտեզը, նախարար Հ.Հակոբյանը պատասխանեց, որ նախարարությունը նոր նախաձեռնություն ունի՝ ստեղծել Սփյուռքի քարտեզ առհասարակ՝ հուշարձաններով, եկեղեցիներով, դպրոցներով, սակայն պատմաբանի կարծիքը հաշվի կառնվի Մեծ եղեռնի 100 ամյակի կապակցությամբ աշխատության վերահրատարակության ժամանակ:

ՀՀ Ազգային ժողովի պաշտպանության, ներքին գործերի եւ ազգային անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, ՀՅԴ ներկայացուցիչ Հրայր Կարապետյանը նկատեց, որ «հուշարձանները մեր անձնագրերն են, այն փաստաթղթերը, որով մենք ապացուցում ենք Հայ դատը»:

Մշակութային ցեղասպանության մասին, սակայն, ըստ նրա, շատ քիչ է խոսվում, այնինչ՝ ողջ քաղաքակիրթ մարդկության աչքի առջեւ ոչնչացվեցին Արցախի եւ Նախիջեւանի, մասնավորապես՝ Հին Ջուղայի հայկական հուշարձանները, որի մասին բարցրաձայնել է անհրաժեշտ: ՀՀ ԳԱ ակադեմիայի Պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանը վստահություն հայտնեց, որ յուրաքանչյուր հայ, լինելով օտար երկրում, ցանկանում է գտնել հայկական մասունք, հայկական ներկայություն՝ եկեղեցի ու դրա մոտ տեղադրված Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող հուշակոթող, իսկ ստեղծված աշխատության մեջ դրանք կողք կողքի են՝ վավերագրված եւ ներկայացված տեղակայման վայրի անվանումով:

«Ցավոք, նման հուշարձաններ չկան հենց այնտեղ, որտեղ իրագործվեց Մեծ եղեռնը՝ Արեւմտյան Հայաստանում, սակայն կգա ժամանակը, որ մենք կկարողանանք 1,5 միլիոն հուշարձան կանգնեցնել այնտեղ», -ընդգծեց պատմաբանը:



ՀՀ սփյուռքի նախարարությունում տեղի ունեցավ «Ցավի, հիշողության եւ պայքարի կոթողներ» պատկերագրի շնորհանդեսը

2011-04-21

Ապրիլի 21-ին ՀՀ սփյուռքի նախարարությունում տեղի ունեցավ «Ցավի, հիշողության եւ պայքարի կոթողներ» պատկերագիրքի հայերեն եւ անգլերեն տարբերակների շնորհանդեսը: Գրքում ներառված են Հայաստանի Հանրապետության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության եւ աշխարհի տարբեր երկրներում գտնվող Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված 288 հուշարձաններ:

«Այս պատկերագիրքը ցույց է տալիս, որ հայ ժողովրդի պայքարը չի դադարում հայդատը իրագործելու եւ արդարության հաղթանակի հասնելու համար: «Ցավի, հիշողության եւ պայքարի կոթողներ»-ը յուրօրինակ ապտակ է պատմության կեղծարարներին, բոլոր նրանց, ովքեր ժխտում են Հայոց ցեղասպանությունը»,- շնորհանդեսի ժամանակ ասաց ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հկատբյանը:

ԵՊՀ պատմության ամբիոնի վարիչ Բաբկեն Հարությունյանը կարեւորելով գրքի գոյությունը, ասաց. «Մա յուրօրինակ կամուրջ է սփյուռքի եւ Հայաստանի միջեւ, ինչպես նաեւ լավ մեթոդ դրսում հայանպաստ կարծիք ձեւավորելու: Բայց ամենակարեւոր գործառնությունը՝ ձեւ է ստիպել թուրքերին հատուցել իրենց կատարած ոճրագործության համար:

Նա նաեւ կարուորեց գրքի տարբեր լեզուներով, մասնավորապես թուրքերենով տպագրելը, քանի որ դա հնարավորություն կտա Թուրքիայի բնակիչներին տեղեկացված լինել իրականությանը, եւ ոչ թե խեղաթյուրված ճշմարտությանը:

«Հիմա միջազգային ասպարեզում ավելի շատ խոսվում է մեր տարածաշրջանի քաղաքական եւ տնտեսական խնդիրների մասին: Այն ինչ իրականանում է մշակութային ցեղասպանություն:

Ողջ քաղաքակիրթ մարդկության աչքի առջեւ ոչնչացվեցին Արցախի եւ Նախիջեւանի, մասնավորապես՝ Հին Ջուղայի հայկական հուշարձանները, որոնց մասին բարձրաձայնել է անհրաժեշտ»,- նկատեց ՀՀ Ազգային ժողովի պաշտպանության, ներքին գործերի եւ ազգային անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, ՀՅԴ ներկայացուցիչ Հրայր Կարապետյանը, շեշտելով գրքի կարեւորությունը մշակույթի պահպանման գործում:



Սփյուռքի նախարարությունում քննարկվել են Լիբանանի հայ երիտասարդության հիմնախնդիրներին առնչվող հարցեր

2011-04-21

Հ.Հակոբյանը ներկայացրեց երիտասարդության տարի հայտարարված 2011 թվականի ընթացքում ՀՀ սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ կազմակերպվելիք

երիտասարդական ծրագրերն ու միջոցառումները՝ կարևորելով երիտասարդության դերը Սփյուռքում հայապահպանության, համահայկական խնդիրների լուծման առումով: Քննարկվեցին Լիբանանի հայ երիտասարդության հիմնախնդիրներին առնչվող հարցեր: Անդրադարձ կատարվեց 2011թ. ՀՀ սփյուռքի նախարարության «Արի տուն» ծրագրին Լիբանանի հայ երիտասարդների մասնակցության հարցին:



ՀՀ սփյուռքի նախարարությունում կայացավ հայ լրագրողների 5-րդ համաժողովի գործադիր մարմնի նիստ

2011-04-20

Հայաստանից նիստին մասնակցում էին գործադիր մարմնի անդամներ Լրատվամիջոցների համահայկական ընկերակցության նախագահ Տիգրան Հարությունյանը, Հայաստանի ժուռնալիստների միության նախագահ Աստղիկ

Գևորգյանը եւ Լիբանանի «Ազդակ» օրաթերթի գլխավոր խմբագիր Շահան Գանտահարյանը, ինչպես նաև ՀՀ սփյուռքի նախարարության աշխատակազմի տեղեկատվության եւ հեռահաղորդակցության վարչության տեղեկատվական-վերլուծական բաժնի պետ Նվեր Նալբանդյանը: Համացանցի միջոցով գործադիր մարմնի նիստին ԱՄՆ-ից մասնակցում էր «Արմինյըն Միրոր Սփեթթեյթըր» շաբաթաթերթի խմբագիր Հակոբ Կարդիվարյանը, Ֆրանսիայից՝ «Նոր Յառաջ» թերթի գլխավոր խմբագիր Ժիրայր Չոլաքյանը, Ռուսաստանի Դաշնությունից՝ «Նոել Կովչեգ» ամսաթերթի գլխավոր խմբագիր Գրիգոր Անիսոնյանը:

Ողջունելով նիստի մասնակիցներին՝ ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը կարևորեց Սփյուռքի հայկական զանգվածային լրատվամիջոցների դերը հայապահպանության գործում: Հ.Հակոբյանն ընդգծեց Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման գործընթացը Սփյուռքի ՁԼՄ-ում առավել ակտիվ լուսաբանելու անհրաժեշտությունը՝ այս առումով հատկապես կարևորելով ոչ հայկական ՁԼՄ-ում աշխատող հայագրի լրագրողների դերակատարությունը: Նախարարը ծանոթացրեց նաև երիտասարդության տարի հայտարարված 2011 թվականի ընթացքում ՀՀ սփյուռքի նախարարության կողմից իրականացվելիք ծրագրերը:

Քննարկվեցին հայ լրագրողների 5-րդ համաժողովից հետո լրատվական դաշտում առկա դրական զարգացումներին, հայկական լրատվամիջոցների տարածաշրջանային հավաքների կազմակերպման, Սփյուռքի հայկական լրատվամիջոցների տարածաշրջանային համակարգող մարմինների ստեղծման և «Հայկական աշխարհ» նախագիծը ներկայացնելուն առնչվող հարցեր, մանրամասներ ներկայացվեց հունիսի 26-ից հունիսի 15-ն անցկացվելիք երիտասարդ լրագրողների դպրոց-համաժողովի ծրագրի և նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ:

Գործադիր մարմնի սփյուռքյան անդամները ներկայացրեցին իրենց տարածաշրջաններում լրատվական դաշտի հիմնախնդիրները: Հստակեցվեցին հայկական լրատվամիջոցների տարածաշրջանային հավաքների կազմակերպման ժամկետները: Պայմանավորվածություն ձևավորվեց գործադիր մարմնի նիստերն այսուհետ գումարել առնվազն ամիսը մեկ անգամ հաճախականությամբ:



ՀՀ սփյուռքի նախարարությունում կայացավ ամսույի ասույիս՝ ի պատասխան Թ.Պողոսյանի անհիմն «մեղադրանքների»

2011-04-19

Ասույիսի ընթացքում բանախոսներն անդրադարձան վերջին շրջանում «Մեկ ազգ, մեկ մշակույթ» հիմնադրամի գործադիր տնօրեն Թամարա Պողոսյանի կողմից ՀՀ սփյուռքի նախարարության և հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի

հասցեին ներկայացրած «մեղադրանքներին»՝ կոնկրետ փաստերով հերքելով վերջինիս շինծու, անհիմն «մեղադրանքները», որոնց նպատակը «շանտաժն է ու զրպարտությունը»:

Նախարարի տեղակալ Ս.Պետրոսյանը, հղումներ կատարելով ՀՀ օրենքներին և «Մեկ ազգ, մեկ մշակույթ» հիմնադրամի կանոնադրությանն ու հոգաբարձուների խորհրդի նիստերի արձանագրություններին, կետ առ կետ անդրադարձավ տարբեր ամբիոններից Թ.Պողոսյանի հնչեցրած «մեղադրանքներին»՝ բացահայտելով դրանց մտացածին, անհեթեթ և անիհիմն լինելու փաստը:

«Թամարա Պողոսյանի՝ անմեղ գառնուկի կերպարանքով հնչեցրած «մեղադրանքները» կեղծ են ու շինծու, դրանք փչած փուչիկներ են, որոնք դատարկ են ու մտացածին և դրանց նպատակը շանտաժն է ու զրպարտությունը»,- ասաց ՀՀ սփյուռքի նախարարի տեղակալը՝ ավելացնելով, որ իրենք նախկինում չէին պատասխանում Թ.Պողոսյանին, համոզված լինելով, որ չարժե պատասխանել անհիմն և փաստեր չպարունակող «մեղադրանքներին»:

Ս.Պետրոսյանը նշեց, որ նրա կողմից բարձրացված աղմուկի իրական պատճառն այն է, որ «Մեկ ազգ, մեկ մշակույթ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ, ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը թույլ չի տվել անարդյունավետ ծախսել պետական բյուջեով նախատեսված գումարները՝ կանխելով չարաշահումները, իսկ Թ.Պողոսյանը, բարձրացրած աղմուկով, փորձում է շեղել հանրության ուշադրությունը կեղծիքներից:

Նախարարի տեղակալը որպես օրինակ ներկայացրեց այն փաստը, որ «Մեկ ազգ, մեկ մշակույթ» փառատոնի շրջանակներում անցկացվող կատարողական արվեստի վեց օրերի համար Թ.Պողոսյանը «Օվացիա» կազմակերպությանը՝ համերգների տեխնիկական սպասարկման, բեմական ծառայությունների համար, ըստ պայմանագրի պայմանավորվել էր վճարել 25 միլիոն դրամ: ՀՀ սփյուռքի նախարարությունը հարցն ուսումնասիրել և պարզել էր, որ ներկայացված գինը շուկայականից անհամեմատ բարձր է: Արդյունքում այդ կազմակերպությանը վճարվել է 18 միլիոն դրամ՝ անտեսելով Թ.Պողոսյանի համառ պահանջները՝ վճարել իր ասած գումարը:

Ս.Պետրոսյանը մանրամասներ ներկայացրեց նաև Թ.Պողոսյանի մեկ այլ չարաշահման վերաբերյալ: Այսպես, կատարողական արվեստի վեց օրերի ընթացքում իր անմիջական պարտականությունների կատարման համար Թ.Պողոսյանը պահանջում էր իրեն վճարել մոտ 2.7 միլիոն դրամ հավելավճար: Նման ահռելի չափերի հավելավճարներ էր պահանջում նաև հիմնադրամի աշխատակիցների համար, որոնց մեծ մասը վերջինիս հարազատներն են (քույր, քրոջ դուստր և այլն):

«Այդպիսի հավելավճարներ մեր երկրում հնարավոր չեն, Թ.Պողոսյանը հիմնադրամը վերածել է ընտանեկան բիզնեսի՝ այնտեղ աշխատանքի ընդունելով իր հարազատներին», - վրդովված ավելացրեց Ս.Պետրոսյանը:

Ս.Պետրոսյանն անթույլատրելի համարեց Թ.Պողոսյանի գործելաճը՝ շեշտելով, որ վերջինս, ղեկավարելով հիմնադրամը, ծախսել է միայն պետական բյուջեով հատկացված գումարները և չի փորձել ծրագրեր իրականացնել՝ հիմնադրամի կանոնադրությամբ նախատեսված այլ աղբյուրներից գումարներ ներգրավելով: Ավելին, ըստ օրենսդրության, հիմնադրամի վարչակառավարչական ծախսերը չեն կարող գերազանցել հիմնադրամի բյուջեի 20 տոկոսը, մինչդեռ Թ.Պողոսյանը 2009թ. ծրագրով նախատեսված 18.6 միլիոն դրամի մեծ մասը հատկացրել էր հիմնադրամի աշխատակիցների աշխատավարձի ֆոնդին՝ առանց հոգաբարձուների խորհրդի որոշման: Առանց այդպիսի որոշումների է նա հաստատել հիմնադրամի 2010թ. հաստիքացուցակը և դրույքաչափերը:

Նախարարի տեղակալը փաստեց, որ ՀՀ Սփյուռքի նախարարությունում ոչ մի կոռուպցիոն երևույթ չի կարող լինել: Իսկ որևէ կազմակերպության հետ գործ ունենալու դեպքում նախարարությունը փորձում է անել հնարավորինը՝ կոռուպցիոն ռիսկերը բացառելու համար:

Ասուլիսին մասնակցող «Մեկ ազգ, մեկ մշակույթ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ, «Հայաստան» համահայկական հիմնադրամի նախագահ Արա Վարդանյանը հավելեց, որ Թ.Պողոսյանը, գերազանցելով իր լիազորությունները, կատարել է առևտրի ընտրություն, նշանակել է աշխատավարձեր, հաստատել է կառուցվածք, ինչը ոչ թե գործադիր տնօրենի իրավասությունն է, այլ հոգաբարձուների խորհրդի:

Ս.Պետրոսյանն իր խոսքը եզրափակեց՝ հավելելով, որ 2011թ. ՀՀ սփյուռքի նախարարությունը ոչ մի ծրագիր չի պատվիրակել «Մեկ ազգ, մեկ մշակույթ» հիմնադրամին, իսկ ՀՀ սփյուռքի նախարարության աշխատակազմի ղեկավար Ֆիրդուս Զաքարյանը դիմել է դատարան գրպարտության և բարի համբավի արատավորման մեղադրանքով՝ ընդդեմ Թ.Պողոսյանի:

Հրանուշ Հակոբյանը և Ֆրանսիայի խորհրդարանի պատգամավոր Ռենե Ռուբեն քննարկել են հայ-ֆրանսիական հարաբերությունները

2011-04-19

ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանն ապրիլի 19-ին ընդունեց Ֆրանսիայի խորհրդարանի պատգամավոր, Ալֆրվիլի (Փարիզի շրջակայքում հայաշատ քաղաք) քաղաքապետ Ռենե Ռուբենին: Ողջունելով հյուրին՝ նախարարն ասաց. «Ուրախ եմ հայ-ֆրանսիական հարաբերությունների զարգացման համար: Ուրախ եմ նաև մեր պետությունների միջև հարաբերությունների համապարփակ զարգացման համար: Վերջերս էլ սկսել ենք համագործակցել նաև Հայաստանում Ֆրանսիական համալսարանի հետ եւ ուսանողները պրակտիկա են անցնում

այստեղ՝ Սփյուռքի նախարարությունում: Վստահ եմ նաեւ հայության համար կարեւորագույն խնդրի առումով՝ Ֆրանսիայում որեւէ մեկը կասկածի տակ չի առնում Հայոց ցեղասպանության եղելությունը»:

«Ես ներկա եմ եղել Ֆրանսիայում Էրդողանի ելույթին, որը փոքրամասնությունների հանդեպ ակնհայտ ագրեսիա էր ներառում: Ասեմ, որ ելույթը չհաջողվեց, քանի որ նրա խոսքի ավարտին ոչ ոք չձափահարեց: Այդ ելույթը ձախողեց նրա այցը Ֆրանսիա: Ի ապացույց հայ-ֆրանսիական ջերմ հարաբերությունների, արդեն իսկ Ֆրանսիայի Սենատի մայիսի 4-ի օրակարգում է Ցեղասպանության ժխտողականությունը քրեորեն պատժելու օրինագիծը: Բացի այդ ես աջակցելու եմ, որպեսզի իմ ղեկավարած քաղաքում բնակվող հայերի մասին գիրք ստեղծվի: Եւ իհարկե այսուհետ Հայաստանում Ֆրանսիական համալսարանի ավելի շատ ուսանողներ հնարավորություն կունենան Ֆրանսիայում ուսանելու»,- շեշտեց Ռենե Ռուբեն:

Նախարարը, շնորհակալություն հայտնելով այցի համար, ընդձեց. «Ֆրանսիան պետական քաղաքական կատարյալ մոդել է ազգային փոքրամասնությունների հանդեպ հանդուրժողականության եւ հավասար իրավունքների տեսանկյունից: Շատ կուզենայինք, որ Թուրքիան իրական ժողովրդավար երկիր դառնար, որովհետեւ առաջին հերթին հենց հայերի հանդեպ գործված ոճիրն իրական գնահատական կստանա»:

Հանդիպմանը ներկա էին նաեւ ֆրանսիահայ բարերար Սարգիս Բեդոյանը եւ մի շարք ֆրանսիացիներ:



Ֆրասահայ բարերար Սարգիս Բեդոյանը պարզեւատրվեց «Պողոս Նուբար» մեղալով

2011-04-19

ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը ընդունեց ֆրասահայ բարերար Սարգիս Բեդոյանին, ում հովհանավորությամբ տարիներ շարունակ Ֆրանսիայի հայկական Դպրոցասեր եւ Սբ. Մեսրոպ վարժարանների սաների համար կազմակերպվում է ամենամյա այցելություն Հայաստան՝ ապրիլի 24-ին Հայոց

ցեղասպանության զոհերի ոգեկոչման միջոցառումներին մասնակցելու համար:

«Շատ ուրախ եմք, որ կարողանում եք երիտասարդներին բերել Հայաստան: Երիտասարդության կապը Հայաստանի հետ կարեւոր է, քանի որ նրանք յուրօրինակ կամուրջ են դառնում Հայաստանի եւ Սփյուռքի միջեւ: Ընդունեք խնդրեմ հայտնի հայ բարեր Պողոս Նուբար փաշայի պատվին սահմանված ՀՀ սփյուռքի նախարարության մեղալը»,- ասաց ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը:

«Երախտապարտ եմ նման պատվի արժանացնելու համար: Միշտ պատրաստ եմ աջակցել համահայկական ծրագրերի իրականացմանը: Ուրախ եմ, որ արդեն առկա են նման գործունեության արդյունավետությունն ապահովող գործիքներ եւ հատկապես ուրախ եմ ՀՀ սփյուռքի նախարարության հետ լայնածավալ համագործակցության համար»,- նշեց Սարգիս Բեդոյանը:

Դպրոցասեր եւ Սբ. Մեսրոպ վարժարանների սաներն ի նշան երախտի կատարեցին ֆրանսիական եւ հայկական երգեր:



Սփյուռքի նախարարությունը պատասխանում է Թամար Պողոսյանի անհիմն մեղադրանքներին

2011-04-18

Այս մասին այսօր լրագրողների հետ հանդիպման ժամանակ նշեց նախարարի տեղակալ Ստեփան Պետրոսյանը՝ նկատելով, որ Թ. Պողոսյանի վերջին ասուլիսի ժամանակ հնչել է միայն մեկ ճիշտ

միտք. այն, որ նա մեկ տարվա ընթացքում աշխատել է Սփյուռքի նախարարության հետ՝ իրականացնելով փառատոնի ծրագրերը, եւ դրանց հետ կապված աշխատանքները նախարարությունում համակարգել է ինքը՝ Ս. Պետրոսյանը: Վերջինս ընդգծեց, որ իրականությանը չեն համապատասխանում այն խոսքերը, թե իրենք ձգձգել են եւ չեն աջակցել ծրագրերի իրականացմանը, ինչպես նաեւ՝ թե իրենք լարվածություն են ստեղծել:

«Մենք, ի տարբերություն Պողոսյանի, պետք է խոսենք փաստերով», - ասաց բանախոսը՝ շեշտելով, որ մինչ օրս Թ. Պողոսյանի «մեղադրանքներին» չպատասխանելու պատճառը եղել է հենց այն, որ մեղադրել կարելի է միայն փաստերով: Նախարարի տեղակալը նկատեց, որ օրերից մի օր էլ կարող է Թ. Պողոսյանը հայտարարել, թե «Լուսնի վրայից բենզինի հոտ է գալիս», որին, բնականաբար, պատասխանելն անիմաստ կլինի: Ս. Պետրոսյանը կետ առ կետ նշեց Թ. Պողոսյանի «դիրքի չարաշահումները»:

Ըստ բանախոսի՝ փառատոնի գործադիր տնօրենը փառատոնի շրջանակներում անցկացվող կատարողական արվեստի 6 օրերի համար «Օվացիա» պրոդյուսերական կենտրոնի հետ պայմանավորվել էր 25 մլն դրամի դիմաց ծառայությունների իրականացում, մինչդեռ ուսումնասիրությունը ցույց է տվել, որ ծառայությունների այդ փաթեթի համար 18 մլն-ը լրիվ բավարար էր. այսպիսով՝ պետբյուջեի գումարներից խնայվել է 7 մլն դրամ: Վեց օրվա աշխատանքի համար Թ. Պողոսյանն իրեն 2 մլն 700 հազար հավելավձար է նշանակել՝ աշխատավարձից բացի:

Նաեւ բացահայտվել է, որ աշխատողների մի ամբողջ շարք բարեկամարյունակցական հարաբերությունների մեջ էր Թ. Պողոսյանի հետ: «ՀՀ սփյուռքի նախարարը թույլ չի տվել, որպեսզի պետբյուջեով նախատեսված գումարներն անարդյունավետ օգտագործվեն», - նշեց նախարարի տեղակալը՝ հավելելով, որ այդպիսով իրենք թույլ չեն տվել, որպեսզի Թ. Պողոսյանը գործի իր ցանկությունների սահմաններում: «Հայաստան» համահայկական հիմնադրամի տնօրեն, Հոգաբարձուների խորհրդի անդամ Արա Վարդանյանը նշեց, որ իր եւ Թ. Պողոսյանի պաշտոնները շատ նման են: Վերջինիս խոսքով՝ Թ. Պողոսյանի հիմնադրամը վերածվել է ՊՈԱԿ-ի, ինչը հակասում է հիմնադրամի կանոնադրությանը:

Հիմնադրամը պետք է ունենա բարերարներ, ոչ թե գոյատևի պետության հաշվին: Ա. Վարդանյանը նաեւ ընդգծեց, որ Թ. Պողոսյանն արել է քայլեր՝ աշխատավարձերի, հավելավձարների նշանակում, առևտրի ընտրություն, որոնք իր գործառույթը չեն, այլ Հոգաբարձուների խորհրդի նախագահի: Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ, կոմպոզիտոր Ռոբերտ Ամիրխանյանն էլ նշեց, որ նշված հիմնադրամի կողմից պարբերաբար իրենց ծրագրերի մեջ միությանը ներգրավելու փորձեր են արվել, որոնք միշտ կասեցվել են: Նշված փառատոնը, ըստ կոմպոզիտորի, լավագույն դեպքում կարող է դառնալ ինքնագործ արվեստի զարգացման միջոց:

Ամեն դեպքում, Ռ.Ամիրխանյանի գնահատմամբ, այն հեռանկար չունի: «Ես ցավ եմ ապրում, թե ինչքան աննպատակ կարող ենք երբեմն ծախսել մեր մտքերն ու միջոցները», - նշեց կոմպոզիտորը: Ի դեպ, սփյուռքի նախարարի տեղակալի խոսքով՝ իրենք Թ. Պողոսյանի դեմ հայց են ներկայացրել դատարան՝ զրպարտելու համար:

Սփյուռք

Ռումինիայում հարգանքի տուրք մատուցեցին Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին

2011-04-24

Բուխարեստի Սբ Հրեշակապետոս Հայոց Մայր եկեղեցում, Մեծ Պահքի պատարագից հետո, կատարվեց հիշատակի հոգեհանգիստ, այնուհետեւ Ռումինիայում ՀՀ դեսպանության, Հայ Առաքելական եկեղեցու Ռումինիայի թեմի և Ռումինիայի Հայոց միության կողմից ծաղկեպսակներ գետեղվեցին Մեծ Եղեռնի զոհերի հիշատակին նվիրված խաչքար-հուշարձանին: Հայոց ցեղասպանության 96-րդ տարելիցի միջոցառմանը ելույթներով հանդես եկան Հայ Առաքելական եկեղեցու Ռումինիայի թեմի առաջնորդ Տաթև Կրկ Հակոբյանը, Հայոց միության նախագահ


Վարուժան Ոսկանյանը եւ Ռումինիայում ՀՀ դեսպան Համլետ Գասպարյանը: «Այսօր արդեն քսան տարի պետական ծրագրված քաղաքականություն է տարվում Հայաստանի Հանրապետության դեմ, ինչը դրսևերվում է Հայաստանը շրջափակելու միջոցով, տնտեսապես մեկուսացնելով, միջազգային կազմակերպություններում հակահայ քայլերով ճնշումներ ենցնել մեր ժողովրդի կամքի վրա՝ հրաժարվելու իր իրավունքների պաշտպանությունից: Ամենավտանգավորը հայաստյաց քարոզչության բոլոր բնույթի ու ծավալումն է, պատմության եւ իրողության խեղաթյուրումը, նեգացիոնիզմը, ինչը, հաշվի առնելով այդ պետության ահռելի հնարավորությունները, ինչպես նաև ներկա հասարակությունների անտեղյակությունը իրականության մասին, պատկերացում էք, թե ինչավերածություններ է գործում եւ ինչպիսի սպառնալիքներ ներկայացնում մեր ժողովրդի անվտանգության, մեր իսկ գոյության, մեր երկրի կենսունակության համար: Այդ սպառնալիքը թեև անմիջականորեն մեզ է ուղղված, սակայն այն վտանգ է ներկայացնում ողջ տարածաշրջանի եւ աշխարհի համար: Քանզի ժամանակակից աշխարհում ուժի դիրքերից թելադրված քաղաքականությունը, ինչը մշտապես վարվել եւ վարվում է մեր դեմ, անտեսելով եւ ոտնահարելով հայ ժողովրդի իրավունքները, չի կարող ոչ միայն լուծել մեր միջեւ եղած հակասությունները, այլեւապահովություն խոստանալ որեւէ մեկին», իր ելույթի մեջ ասաց դեսպան Համլետ Գասպարյանը:

«Ուստի միջազգային հանրության պատասխանատու կեցվածքը Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում, դեմոկրատական հասարակությունների եւ մտավորականների բողոքն ու ձայնը այդ անժամանցելի ոճիրի դեմ, թուրքական հասարակության զանազան շերտերի, մտավորականության ու քաղաքական ուժերի օրեցօր դրսևերվող ընդվզումը եւ պահանջը սեփական իշխանություններից միակայանն է թուրքական կառավարությանն ստիպելու՝ վերջ տալու այդ անհեռանկար քաղաքականությանը, փակելու այդ ամոթալի էջը եւ փորձելու իր հարեւանի հետ կառուցելու ավելի հուսալի ապագա», ասաց Հայաստանի դեսպանը:

Մինչ այդ, Հայոց մշակութային տան ողջ երկարությամբ, Կարոլ Ա-ի պողոտայի դիմահայաց մասում, պատատառի վրա ցուցադրվում էին Արմին Վեզնեի եւ այլոց վավերական լուսանկարները, որոնք պատմում էին հայերի տեղահանության եւ կրած տառապանքների մասին: Նկարաշարը պետք է ցուցադրվի մի քանի օր:

Ցեղասպանության զոհերի հիշատակի միջոցառումներ տեղի ունեցան նաև հայաբնակ Կոստանցա, Սուչավա, Յաշ, Պիտեշտ, Բոտոշան, Գալաց, Բակաու, Ֆոկշան, Տուլչեա, Կլուժ, Գեոլա, Գեորգեն եւ Դումբրավեն քաղաքներում: Հայոց ցեղասպանության վերաբերյալ հայտարարություններով Ռումինիայի Սենատում հանդես կգան սենատոր, Ռումինիայի Հայոց միության նախագահ Վարուժան Ոսկանյանը, իսկ Պատգամավորների պալատում, պատգամավոր, Ռումինիայի Ազգային փոքրամասնությունների խմբի ղեկավար Վարուժան Փամբուկյանը:

Մայիսի վերջին նախատեսվում է Ռումինիայի գիտությունների ակադեմիայում կազմակերպել դասախոսություն Հայոց ցեղասպանության եւ Հայաստանի առաջին Հանրապետության վերաբերյալ, հաղորդում են ՀՀ ԱԳՆ մամլո ծառայությունից:



Մտամբուլում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին ակցիա է ընթանում

2011-04-24

Ինչպես PanARMENIAN.Net ի թղթակցին հաղորդեցին՝ Մտամբուլից, ոստիկանությունը հսկում է ցուցարարների ակցիաների հնարավոր հարձակումներից: Ակցիան անցկացվում է արդեն երկրորդ տարին անընդմեջ, անցյալ տարի նման միջադեպեր տեղի չեն ունեցել: Հավաքվածները կարմիր

մեխակներ և սպանված հայ մտավորականների՝ Գրիգոր Զոհրապի, Դանիել Վարուժանի, Միամանթոյի, Հրանտ Դինքի լուսանկարներն են պահում:

Մինսկի հայ համայնքը հարգանքի տուրք է մատուցել Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին

2011-04-24

Միջոցառման ընթացքում ելույթ ունեցավ Բելոռուսում Հայաստանի դեսպան Արմեն Խաչատրյանը: Հայոց ցեղասպանության 96-րդ տարելիցին նվիրված միջոցառմանն ավելի քան 200 հայ մասնակցեց:



Սիմոն Այնեջյան. Աշխարհի մնացած երկրները պետք է հետևեն Կիպրոսի օրինակին և ճանաչեն Հայոց ցեղասպանությունը

2011-04-24

Ինչպես հաղորդել է աղբյուրը, մեկ շաբաթ առաջ Կիպրոսի խորհրդարանում նույնպես Հայոց ցեղասպանության 96-րդ տարելիցին նվիրված միջոցառում է կայացել:

«Կիպրոսն արդեն ճանաչել է Հայոց ցեղասպանությունը, Կիպրոսի խորհրդարանը երկու անգամ ընդունել է Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման մասին բանաձևը: Մենք պահանջում ենք, որպեսզի աշխարհի մնացած երկրները հետևեն Կիպրոսի օրինակին և ճանաչեն այդ պատմական փաստը», - ասել է Սիմոն Այնեջյանը:



Երուսաղեմի հայերը Թուրքիայից պահանջում են ճանաչել Հայոց ցեղասպանությունը

2011-04-24

Ինչպես PanARMENIAN.Net ի թղթակցին հաղորդեց «Հայ Դատ» գրասենյակի ղեկավար Ժորժետտա Ավագյանը, հուշարձանից սկսվեց երթը դեպի Իսրայելում Թուրքիայի դեսպանատուն, որին ավելի քան 200 մարդ էր մասնակցում, այդ թվում՝ հրեաներ: Երթի մասնակիցները Թուրքիայից պահանջում էին ճանաչել 1915-

1923թթ. Օսմանյան կայսրությունում իրագործված Հայոց ցեղասպանությունը:

Ժորժետտա Ավագյանը հաղորդել է նաև, որ այս տարի Տիրոջ Գերեզմանի տաճարում հայ և հույն հոգևորականների միջև սովորաբար տեղ գտնող ընդհարումներ չեն եղել:



Ապրիլի 24-ին և 25-ին Բելրություն տեղի կունենան Հայոց ցեղասպանության 96-ամյակին նվիրված միջոցառումներ

2011-04-24

«Անթիլիասի միջոցառմանը ելույթ կունենա Նորին Սրբություն Արամ Ա-ն և Լիբանանում Հայաստանի դեսպան Աշոտ Քոչարյանը: Ապրիլի 25-ին վաղ առավոտից մինչև ուշ երեկո

Բելրություն Հայաստանի դեսպանատունը սգալի ամսաթվին նվիրված մի շարք միջոցառումներ կանցկացնի՝ նվիրված Հայոց ցեղասպանության 96-րդ տարելիցին: Կցուցադրվեն ֆիլմեր, կբացվի ցուցահանդես: Հրավիրված են Լիբանանի խորհրդարանի պատգամավորներ, դիվանագիտական կորպուսը, հասարակական կազմակերպություններ և ՋԼՄ ներկայացուցիչներ», - ասել է Կանդահարյանը:

Իսպանիայում հարգանքի տուրք են մատուցել Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին

2011-04-24

Ընդ որում, նա նկատել է, որ այդ միջոցառումները համեմատելի չեն նախորդ տարիների միջոցառումների հետ, երբ ողջ հայ համայնքը միայն մեկ, բայց մեծ միջոցառում էր անցկացնում: Օրինակ՝ 2007 թվականին Վալենսիայում հայ համայնքը լայնամասշտաբ ակցիա անցկացրեց՝ միջազգային հանրությանը կոչ անելով ճանաչել Հայոց ցեղասպանությունը:

Վրաստանի հայերը բողոքի ակցիա են անցկացրել Թբիլիսիում Թուրքիայի դեսպանատան դիմաց

2011-04-24

Վերջերս Վրաստանի հայկական կազմակերպությունները վրաստանի նախագահին ու խորհրդարանին նամակ են հղել՝ կոչ անելով ճանաչել Օսմանյան կայսրությունում իրագործված Հայոց ցեղասպանությունը: Հայկական կազմակերպությունները վրացի պատգամավորների առաջարկել են Հայոց ցեղասպանության ճանաչման մասին օրինագիծ նախաձեռնել:

Ուրուզվայի հայ համայնքը հարգանքի տուրք է մատուցել Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին

2011-04-24

Ուրուզվայի հայ համայնքը հարգանքի տուրք է մատուցել Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին: Ապրիլի 24-ին Ուրուզվայի մայրաքաղաք Մոնտեվիդեոյում՝ Ս.Ներսես Շնորհալի եկեղեցում, Մուրբ Զատկի պատարագից հետո տեղի ունեցավ ժողովրդական հավաք՝ եկեղեցու բակում գտնվող Մեծ Եղեռնի հուշակոթողի դիմաց: Խոսքով հանդես եկան ՀՅԴ «Արմենիա» երիտասարդական միության անդամները:

Ապրիլի 25 -ին քաղաքի Անկախության հրապարակում կտեղադրվի ծաղկեպսակ սբ. Արթիգասի հուշարձանի մոտ՝ որպես հարգանքի տուրք այդ երկրի հայասեր կառավարությանը և ժողովրդին: Ապրիլի 26-ին Ուրուզվայի խորհրդարանի նախագահության նախաձեռնությամբ սենատի նախասրահում տեղի կունենա ոգեկոչման ձեռնարկ, որտեղ իր խոսքով հանդես կգա Բուենոս Այրեսից հրավիրված, Արգենտինայի արդարադատության նախարարության Մարդու իրավունքների և խտրականության դեմ պայքարի գրասենյակի համադրող Պեդրո Մուրադյանը:

Ապրիլի 29-ին Երիտասարդական միությունները Մոնտեվիդեոյի գլխավոր պողոտայից մինչև Մոնտեվիդեոյի համալսարանի շրջափակը «Արդարության համար» քայլարշավ կանցկացնեն, որի ժամանակ տեղում կկատարվի հատուկ ոգեկոչման արարողություն:



Եվրոպայի հայերի համագումար. Միջազգային հանրությունն այլևս մտադիր չէ լռել Հայոց ցեղասպանության մասին

2011-04-23

Դրանում նշվում է, որ անվիճելի փաստ է այն, որ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը հասել է իր զարգացման կիզակետին և, որ «առաջադեմ մարդկությունն ու

համաշխարհային հանրային կարծիքն իրենց վճռական քայլերով ապացուցեցին, որ այլևս պատրաստ չեն մոռացության մատնել մարդկության դեմ իրականացված այս ոճիրը»: Այս գործընթացի զարգացումը ցույց է տալիս, որ միջազգային հանրության կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումն անխուսափելի է: Հաղորդագրության մեջ ընդգծվում է, որ մարդու իրավունքների պաշտպանության առիթով բոլոր խոսակցությունները՝ կլինեն կեղծ, եթե բուպեական քաղաքական, տնտեսական և այլ կարգի շահերի համար լռության մատնվի հայերի դեմ իրականացված մեծ ոճիրը, և «ամբողջ ժողովրդի դահիճների ժառանգները ստանան այս կամ այն կարգի հովանավորություն: Քանի դեռ հայերի դեմ կատարված ցեղասպանությունը չի ընդունվել որոշ պետությունների կողմից և նրա հետևանքները չեն վերացել, վերջիններիս պետք է դիտել որպես ոճրագործության մասնակցի կամ գործակցի»:

AAE-ն հայտարարում է, որ միայն թուրքերի զոջումը և միջազգային հանրության կողմից տրված միանշանակ գնահատականներն ու իրագործված ոճրագործության դատապարտումը կարող են լինել երաշխիք, որ Թուրքիան նորից չի սկսի ցեղասպանությամբ լուծել իր քաղաքական հարցերը: «Միայն այս ձևով Թուրքիան կարող է ապացուցել իրեն և աշխարհին, որ այլևս չի համարվում ոճրագործ պետություն: Հայերի նկատմամբ թուրքական ոճրային քաղաքականությունը չվերակսելու նախանշան կարող է հանդիսանալ նաև այն, որ Թուրքիան հրաժարվի Ադրբեջանի

հետ ռազմաքաղաքական դաշինքի մեջ մտնելուց, և Հայաստանը շրջափակման ենթարկելու 15-ամյա քաղաքականությունից: Թուրքիան, երբ ձեռք է մեկնում հայերին, այդ ձեռքը չի կարող ներկված լինել հայ ժողովրդի նախնիների արյան հետքերով», - ընդգծվում է ուղերձում:

AAE-ն ավելացրել է նաև, որ միջազգային հանրության կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը Ֆրանսիայից և Ռուսաստանից հետո, ամենից առաջ՝ ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի և մանավանդ Գերմանիայի կողմից ունի մեծ նշանակություն՝ ոչ միայն որպես հայերի նկատմամբ արդարացի մոտեցում, այլև համայն մարդկությունից այս ոճրագործությունը արմատախիլ անելու համար:



Ապրիլի 24-ին Կիևում երկու խաչքար կոծեն

2011-04-23

Ապրիլի 24-ին Ուկրաինայի բոլոր հայկական եկեղեցիներում ու մատուռներում հոգեհանգստյան կարգ կկատարվի Ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակին:

Ապրիլի 24-ին Ուկրաինայի բոլոր հայկական եկեղեցիներում ու մատուռներում հոգեհանգստյան կարգ կկատարվի

Ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակին: Կիևում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը կհարգեն մատուռում, որը գտնվում է այն տարածքում, որը հատկացրել են ՀԱԵ Ուկրաինայի թեմի իշխանությունները եկեղեցու կառուցման համար, հայտնում է Analitika.at.ua-ն:

Ապրիլի 25-ին Կիպրոսի հայ համայնքը երթ կանցկացնի՝ նվիրված Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին

2011-04-23

Կիպրոսի հայ համայնքը ձևավորվել է Հայոց ցեղասպանությունից հետո, երբ Կիլիկիայում կոտորածից փրկված հայերն ապաստան գտան Կիպրոսում:

Կիպրոսի Հայ Դատի հանձնախմբի հայտարարության մեջ ասվում է, որ Հայոց ցեղասպանության 100-ամյակին՝ 2015թ. ողջ աշխարհի հայերը կմիավորվեն՝ պահանջելով արդարություն ու հատուցում: Հայտարարության մեջ ասվում է, որ հայերը բողոքում են թուրքական կառավարության դեմ, որը ժխտում է Ցեղասպանության փաստը:



Կալիֆորնիայի հայերն անցկացրել են «Օբամա, կատարիր խոստումդ և ճանաչիր Հայոց ցեղասպանությունը» ակցիան

2011-04-22

Անվանի երաժիշտ, System of A Down խմբի երաժիշտ ու մարդու իրավունքների պաշտպան Մերթ Թանկյանը կոչ է արել հավաքվածներին կանգնել ստուղիայի դարպասների առջև՝

վանկարկելով 2008-ի Օբամայի նախընտրական խոստումը՝ «Որպես ԱՄՆ նախագահ ես կճանաչեմ Հայոց ցեղասպանությունը»: Ցուցարարները վանկարկել էս այդ խոսքերը 15 րոպե շարունակ:

Մերթ Թանկյանը շնորհակալություն է հայտնել հավաքվածներին և ասել, որ ցույցն ուղղված է ոչ միայն նրան, որ Օբամայի վարչակազմը չի կատարել խոստումը, այլ նաև բոլոր խոստումներին, որոնք նա չի կատարել:

Ամերիկայի Հայ դատի հանձնախմբի Արևմտյան բյուրոյի տարածաշրջանային տնօրեն Էնդրյու Գզիրյանի խոսքերով, ANCA-ն նամակ է ուղարկել նախագահ Օբամային՝ խնդրելով ծաղկեպսակ դնել Մոնթբերեյլում հայ նահատակների հուշարձանին Լոս Անջելես կատարած այցի ընթացքում: «Եթե Օբաման ցանկանում է վերընտրվել, ապա հայ համայնքը և ակտիվիստները, որոնք հանդես են գալիս ցեղասպանության դեմ, ապաստան են, որպեսզի նա ասի «ցեղասպանություն» բառն ապրիլի 24-ի ուղերձում: Ժամանելով Կալիֆորնիա, որը ցեղասպանության զոհերի մոտ մեկ միլիոն

Ժառանգների տունն է դարձել, նախագահը պետք է այցելի Նահատակների հուշարձան», - ասել է Կզիրյանը, գրում է Asbarez-ը:

Բոլոր տեղական հեռուստաալիքներն ուղիղ հեռարձակում են իրականացրել: Հեռուստահաղորդումների ժամանակ ցուցադրվել են Օբամայի խոսքերով տեսահոլովակներ, որտեղ դեռ սենատոր Օբաման ասում է «Որպես ԱՄՆ նախագահ ես կճանաչեմ Հայոց ցեղասպանությունը»:

Արխագիայի վարչապետը համագործակցություն է խոստանում հայերին

2011-04-22

Սուրեն Կերսեյանը Արխագիայի վարչապետին ծանոթացրեց հայ համայնքի կառուցվածքի և գործունեության հիմնական ուղղությունների հետ, պատմեց Հայաստանի և սփյուռքյան հայկական կազմակերպությունների հետ իր դեկավարած կազմակերպության կապերի մասին:

Մասնավորապես, Հայ համայնքի ղեկավարը հայտնեց հայաստանյան «Երկիր-մեդիա» հեռուստաալիքի նկարահանող խմբի վերջերս Արխագիա կատարած այցելության մասին, որը հնգօրյա նկարահանումների ընթացքում Արխագիայում բնակվող հայերի մասին պատմող բավականին շատ տեսանյութեր է պատրաստել:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին Սուխումի 9 միջնակարգ դպրոցի վերանորոգման, սպորտային խմբակների կազմակերպման և այլ հարցեր: Մերգեյ Շամբան այդ խնդիրների լուծման նպատակով տարբեր գերատեսչությունների տվեց մի շարք հանձնարարականներ:

Հանդիպման ավարտին վարչապետը նորից շնորհավորելով Սուրեն Կերսեյանին ընտրվելու կապակցությամբ, խոստացավ համագործակցել և ցուցաբերել աջակցություն Արխագիայի հայ համայնքի գործունեությանը:



Աղայանական այդ տունը Բոլնիս- Խաչենում

2011-04-22

Այս անգամ միջոցառումը նվիրված է Ղ. Աղայանի ծննդյան 171 եւ մահվան 100-ամյա տարելիցին: Բոլնիս-Խաչենը Աղայանի տուն-թանգարանում կրկին դռները լայն բացեց ընդունելու Թբիլիսիից եւ Հայաստանից ժամանած հյուրերին, որոնց թվում էին Վրաստանում արտակարգ եւ լիազոր դեսպան Հովհաննես Մանուկյանը, դեսպանության այլ աշխատակիցներ, Կիրահայոց թեմի առաջնորդ՝ եպիսկոպոս Վազգեն

Միրզախանյանը, Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Արմեն Բայանդուրյանը, Վրաստանի նախագահի խորհրդական՝ «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, «Վրաստանի հայերի միության» նախագահ Գենա Մուրադյանը, Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միության նախագահ Ժորա Մնխչյանը՝ «Վերնատուն» 12 անդամների հետ, բանաստեղծ-թարգմանիչ Գիվի Շահնազարը, «Կամուրջ» տարեգրքի խմբագիր բանաստեղծուհի Անահիտ Բոստանջյանը, Հայաստանի հայ գրողների միության անդամներ՝ մանկագիր –բանաստեղծ Երվանդ Պետրոսյանը, «Էջմիածին» ամսագրի խմբագիր Արշակ Մադոյանը, «Բոլնիս-Խաչեն» հայրենակցական միության նախագահ Ալբերտ Ոսկանյանը, լրագրող-ստեղծագործող Վանիկ Մանթրյանը եւ ուրիշներ: Տոնին ներկա էին Բոլնիսի շրջանի ղեկավար Իոսեբ Լալիաշվիլին, այլ աշխատակիցներ, Բոլնիսիի գյուղապետը, դպրոցի տնօրենը, ուսուցիչներ, աշակերտներ, ծնողներ, գյուղի բնակիչներ:

Հյուրերն իրենց ելույթում ընդգծեցին Աղայանի գրական -մանկավարժական ժառանգը եւ նշեցին հայ դասականներին մեծարելու իրենց պարտքը, իսկ Վ. Բայբուրթյանը խոստացավ այսուհետեւ գյուղի դպրոցականների համար նաեւ ամենամյա այցելություն կազմակերպել Թբիլիսիի Խոջիվանքի պանթեոն, որպեսզի ծաղիկներ դնեն իրենց հայրենակցի եւ Խոջիվանքում հանգչող մեր այլ գրողների շիրիմին: Միջոցառումն ավարտվեց գյուղի դպրոցականների գրական-երաժշտական ելույթով: Ղ. Աղայանի արձանին դրվեց մեր նորանշանակ դեսպանի նվեր ծաղկեպսակը եւ այլ ծաղկեփնջեր:

31 դպրոցի հայոց լեզվի ուսուցչուհի Մանանա Կարապետյան

Հայկական Վիրտուալ Համալսարանի հիմնադիր նախագահ պրոֆեսոր Երվանդ Զորյանը Թբիլիսիում

2011-04-22

Այցի շրջանակներում Երվանդ Զորյանը այցելեց Վիրահայոց թեմին կից գործող «Հայարտուն» կենտրոն, «Մուրբ Եղիա», «Մուրբ Գրիգոր Նարեկացի» կիրակնօրյա դպրոցներ, հանդիպում ունեցավ Վիրտուալ համալսարանի ուսանողների հետ եւ անձամբ ներկայացրեց նշված ուսումնական հաստատության հնարավորություններն ու նախագծերը:

Հարկ է նշել, որ Վիրահայոց թեմին կից գործող «Հայարտուն» կենտրոնի կրթական բաժնի ղեկավարի Մարիա Առաքելովայի նախաձեռնությամբ ուսուցման այս համակարգը այս տարվանից հաջողությամբ սկսել է գործել է նաև Վրաստանում:

Մարիա Առաքելովայի խոսքերով, համալսարանը նպատակ ունի իր մասնաճյուղը բացել նաև Վրաստանում, ինչը լավագույն հնարավորություն կարող է հանդիսանալ Վրաստանի հայ համայնքի ներկայացուցիչների համար հայոց լեզվի եւ պատմության ուսուցման տեսակետից:



Կոնգրեսական Էդ Ռոյսը հավաստիացրել է ԱՄՆ հայ համայնքին, որ կշարունակի սատարել նրան

2011-04-22

Հանդիպման ժամանակ ԱՀՀ ներկայացուցիչները շնորհակալություն են հայտնել կոնգրեսական Ռոյսին Հայաստանին ու Լեռնային Ղարաբաղին մշտապես սատարելու համար օգնության տրամադրման, Ադրբեջանին ռազմական օժանդակության դադարեցման ու Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում: Էդ Ռոյսն ընդգծել է, որ կշարունակի սատարել ԱՄՆ հայ համայնքին հայ ժողովրդի շահերն առաջ մղելու հարցում՝ մտահոգություն հայտնելով Ադրբեջանի ռազմատենչ ճարտասանության վերաբերյալ: «Մենք անհամբեր սպասում ենք կոնգրեսական Ռոյսի հետ համատեղ աշխատանքին և ողջունում ենք նրա հավատարմությունը մարդու իրավունքների պաշտպանությանը», հայտարարել է ԱՀՀ Հարավային Կալիֆորնիայի հոգաբարձուների խորհրդի անդամ Լիզա Գալուստյանը:

Բելրություն երեք հայկական ավանդական կուսակցությունները կնշեն Հայոց ցեղասպանության 96-րդ տարելիցը

2011-04-22

Ինչպես գրում է լիբանանյան The Daily Star թերթը, բոլոր երեք կուսակցությունները հանդես են եկել հայտարարությամբ, որում միջազգային հանրությանը կոչ են անում ճանաչել Օսմանյան կայսրությունում իրագործված Հայոց ցեղասպանությունը:

Ապրիլի 24-ին Կաթողիկոս Արամ Ա-ն նաև հանդես կգա ուղերձով՝ Ձատկի տոնի առթիվ:

“Հայոց ցեղասպանությունը 1914-18թթ. Վրացական պարբերականներում” գրքի շնորհանդեսը Թբիլիսիում

2011-04-21

Ժողովածուի մեջ ընդգրկված են Վրաստանի ազգային խորհրդարանական գրադարանի վրացական պարբերականների բաժնում պահված նյութեր, մասնավորապես՝ Հայոց մեծ եղեռնը լուսաբանող նյութեր վրացական 3 տպագիր թերթերից՝ “Սաքարթվելո” (“Վրաստան”), “Մամշոբլո” (“Հայրենիք”), “Սախալխո փուրցելի” (“Ժողովրդական թերթիկ”) և “Կլդե” (“Ժայռ”) ամսագրից:

“Ժողովածուի հիմնական նպատակն է խթանել Վրաստանի գիտական շրջանակներին ուսումնասիրելու նյութերի և փաստերի այն հսկա շտեմանարը, որը պահվում է վրացական պահոցներում, դրանով իսկ լրացնելով Հայոց ցեղասպանության արդեն գոյություն

ունեցող պատկերը”,- ասում է գրքի վրա աշխատող ուսանող Ալեքսանդր Օհանյանը:

“Վրաստանի հայ ուսանողների միություն” կազմակերպության ղեկավար Արմեն Աղաջանովի խոսքերով. “Գրքի հրատարակման գլխավոր նպատակն է նաև ներկայացնել հասարակությանը 1914-18թթ. վրացական տպագիր մամուլում պահպանված, մինչ օրս հանրությանն անհայտ նյութեր և դրանով աջակցել վրացական հասարակությանը ուսումնասիրել ու գնահատել Հայերի ցեղասպանության փաստը, ինչը տասնամյակներ շարունակ արգելված է եղել Վրաստանում”:

Գրքի նախաբանը գրել է պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Օթար Ջանելիձեն, ով նշել է, որ տվյալ ժողովածուն իր մեջ ամփոփում է նյութեր, որոնք արտահայտում են նշված ժամանակահատվածի վրացական մամուլի և վրացական քաղաքական կազմակերպությունների տեսակետները և ներկայացնում են վրաց ժողովրդի վերաբերմունքը այն ողբերգությանը, որ իրագործվեց Թուրքիայում հայերի նկատմամբ:

Գրքի վրա աշխատել են “Վրաստանի հայ ուսանողների միություն” հասարակական կազմակերպության անդամներ Ալեքսանդր Օհանյանը, Արթուր Միրզոյանը, Ռազմիկ Բադալյանը, Գևորգ Յաղոթովը և Էդուարդ Սահակյանը:



Թբիլիսիում նշել են հայ բարերար Ալեքսանդր Մանթաշովի մահվան 100 տարին

2011-04-20

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Վերահայոց թեմի «Հայարտուն» կենտրոնի և Վրաստանում Հայաստանի Հանրապետության դեսպանության նախաձեռնությամբ, ապրիլի 19-ին Թբիլիսիի Սուրբ Էջմիածին եկեղեցու գավթում, որտեղ հանգչում է Ալեքսանդր Մանթաշովի աճյունը, կայացավ հուշ-

ցերեկույթ և հոգեհանգստյան կարգ, նվիրված մեծ բարերարի մահվան 100-ամյակին:

Վերահայոց թեմի առաջնորդ Վազգեն Եպիսկոպոս Միրզախանյանը կատարեց հոգեհանգստյան արարողություն, որից հետո, դիմելով հասարակությանը, բարձր գնահատեց Ալեքսանդր Մանթաշովի ներդրումը հայ եկեղեցաշինության, արվեստի, գիտության և այլ բնագավառներում:

Ցերեկույթին մասնակցում էին Ալեքսանդր Մանթաշովի կառուցած Թբիլիսիի թիվ 43-րդ հանրային դպրոցի սաները և ուսուցչական կազմը, որը, չգիտես ինչու, կրում է ոչ թե մեծ բարերարի, այլ բանաստեղծ Տիգրան Տաբիձեի անունը:

Բարերար Նելսոն Պետրոսյանը իր ելույթում նշեց, որ ամեն ունևոր հայ պետք է ձգտի նմանվել Ալեքսանդր Մանթաշովին :

«Հայարտուն» կենտրոնի մշակույթի բաժնի ղեկավար Լևոն Զիդիլյանը նշեց, որ այս տարի Թբիլիսիի Սուրբ Էջմիածին եկեղեցու գավթում կտեղադրվի Ալեքսանդր Մանթաշովի արձանը , կտպագրվի գիրք (հայրեն, վրացերեն և ռուսերեն լեզուներով) և տեղի կունենա գիտաժողով նվիրված մեծ բարերարին:

Թբիլիսիում նշել են հայ բարերար Ալեքսանդր Մանթաշովի մահվան 100 տարին:



Ապրիլի 19-ին հոլանդահայերը Հաագայում ցույց անցկացրեցին Հայոց ցեղասպանության 96-րդ տարելիցի կապակցությամբ

2011-04-20

Հանրահավաքի ընթացքում ելույթ ունեցան խորհրդարանի անդամները, հոլանդահայ կազմակերպությունների ներկայացուցիչներ: Այնուհետև հանրահավաքի մասնակիցները

քայլարշավով շարժվեցին դեպի Հաագայում Թուրքիայի դեսպանություն, հաղորդում է ՀՀ ԱԳՆ մամուլի, տեղեկատվության և հասարակայնության հետ կապի վարչությունը:

Չեխիայի հայ համայնքը կոգեկոչի Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը

2011-04-20

Երեկոն կանցկացվի Չեխիայում ՀՀ դեսպանության հովանու ներքո: Ելույթներ կունենան Չեխիայում Հայ առաքելական եկեղեցու հոգևոր հովիվ Բարսեղ վարդապետ Փիլավյանը, Չեխիայում Հայաստանի Հանրապետության գործերի ժամանակավոր հավատարմատար Դավիթ Ղուկասյանը, եւ այլք: Այնուհետեւ ներկաները կդիտեն հեռուստալրագրող Արտյոմ Երկանյանի «Թոռների պատասխանը» վավերագրական ֆիլմը: Երեկոն կեզրափակվի դասական երաժշտության համերգով: Ելույթներ կունենան «Մուզիկա պետիկա» չեխական երգչախումբը, ջութակահարներ Աննա Համբարձումյանը եւ Արմեն Սարգսյանը, պատանի դաշնակահար Սոնա Քոլոյանը եւ երգչուհի Վարինե Մկրտչյանը: Համերգային մասը կեզրափակի վիրտուոզ դաշնակահար Վազգեն Վարդանյանը, ասվում է «Օրեր» հանդեսի պաշտոնական կայքում:

Նույն օրը Պրահայի Սուրբ Յիվի եկեղեցում կմատուցվի Սուրբ Զատիկի պատարագ, իսկ եկեղեցու հարեւանությամբ գտնվող GH Art Gallery ցուցասրահում ժամը 19.00-ին կբացվի հայ եւ օտար նկարիչների ցուցահանդես:

Ապրիլի 24-ին ժամը 12.00-ին Յիհլավա քաղաքի Սուրբ Հոգու եկեղեցում տեղի կունենա ժամերգություն՝ նվիրված Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին: Կկատարվի նաեւ Սուրբ Զատիկի ավանդական արարողությունը, իսկ Խաչքար հուշարձանի մոտ «Հանուն խաղաղության» միջոցառմանը կմասնակցեն նաեւ Յիհլավայի Արվեստի գրաֆիկական դպրոցի սաները: Միջոցառումը կազմակերպել է «Ուրարտու» հայ-չեխական ընկերությունը:

Նիդերլանդներում տոնել են «Միացյալ հայերը Հուլանդիայում» միության և «Վան» կիրակնօրյա դպրոցի 10-ամյակը

2011-04-19

Միջոցառմանը ողջույնի խոսքով հանդես եկավ Նիդերլանդներում Հայաստանի դեսպան Զյունիկ Ադաջանյանը, ով բարձր գնահատեց հայապահպանության ուղղությամբ իրականացրած նրանց գործունեությունն ու հետագա հաջողություններ մաղթեց աճող սերնդին հայեցի եւ ազգային արժեքների ոգով դաստիարակելու գործում, հաղորդում է ՀՀ ԱԳՆ մամուլ ծառայությունը:

Տոնական միջոցառմանը ներկա էին Նայմեխենի քաղաքապետարանի, հայկական կազմակերպությունների եւ հայ համայնքի ներկայացուցիչներ:



Ապրիլի 16-ին հունահայ երիտասարդությունը բողոքի ցույց անցկացրեց Աթենքում Թուրքիայի դեսպանատան դիմաց

2011-04-19

Ապրիլի 23-ին Լոնդոնում՝ Օբսֆորդ սթրիթում, տեղի կունենա Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի երթ

2011-04-18

Երթը սկսվելու է ժամը 11:30-ին և տևելու մինչև 14:30-ը:

Ինչպես սպասվում է, երթին մասնակցելու են Լոնդոնի հայ համայնքի ներկայացուցիչներ, Մեծ Բրիտանիայում Հայաստանի դեսպանատան աշխատակիցներ, ուսանողներ:

Ֆրանսիայի հայ համայնքը նախագահ Մարկոզիին մեղադրում է դավաճանության մեջ

2011-04-18



Նամակում մասնավորապես ասվում է. «Որպես ֆրանսահայ լրագրող, Հայոց ցեղասպանությունից տուժած և Երկրորդ համաշխարհային պատերազմի մասնակից իմ հոր որդին, ես, ինչպես նաև այլ ֆրանսահայեր, որոնք «ինտեգրվել են ֆրանսիական հանրությանը», խիստ վրդովված եմ: Վրդովված են նաև Ազգային ժողովի ու Սենատի պատգամավորները՝ Wikileaks-ի միջոցով իմանալով, որ Ֆրանսիայի Հանրապետության նախագահը, աջակցություն խոստանալով Ֆրանսիայի հայ համայնքին Հայոց ցեղասպանության ուրացման դեմ պայքարում, հրաժարվել է իր խոսքից: Ես մեջբերում եմ Ձեզ. «Ես լիովին կիսում եմ ձեր այն ցանկությունը, որ Ֆրանսիան պետք է դեմ հանդես գա ոճրագործությանը, բռնության քարոզչությանը: Եվ Ֆրանսիան պետք է դատապարտի հանցագործության ժխտումը: Դա պետք է որոշեն խորհրդարանականները: Ձոռերի ու նրանց հարազատների հիշատակը վիրավորելու համար պետք է պատասխան տալ: Խոսքի ազատություն չի նշանակում պատմության վերանայման ազատություն կամ ակնհայտ պատմական փաստերի մերժում: Ես չեմ ընդունում այն, որ ֆրանսահայերը սպառնալիքի տակ կհայտնվեն, եթե ընդունվի այդ օրենքը»:

Դա գրված էր ապրիլի 24-ի Ձեր ուղերձում: Մի քանի շաբաթ անց, 2007թ. մայիսի 16-ին ձեր դեսպանորդ ու դիվանագիտական խորհրդական Ժան Դավիթ Շեվիտը, շտապեց հանգստացնել Թուրքիային Ձեր անունից:

Այդպիսով, մոտ 500 000 ֆրանսահայեր արդարացիորեն գտնում են, որ Դուք նրանց դավաճանել եք: Այդպիսով, օտարերկրյա կառավարությունը կարող է ազդել Ֆրանսիայի քաղաքականության վրա...Դա կարելի էր ակնկալել, քանի որ Սենատում Թուրքիայի պետնախարար Էզեմեն Բաղիսը 2011թ. ապրիլի 7-ին թույլ տվեց իրեն դիմել սենատորներին՝ Հայոց ցեղասպանության քրեականացման մասին օրենքի ընդունումից զերծ մնալու կոչով:

Հիշեցնեմ Ձեզ, որ միշտ հավասարակշռված Շառլ Ազնավուրը հայտարարեց, որ հայ համայնքը չի քվեարկի Ձեր օգտին, եթե օրենքը չընդունվի: Դա կնշանակի, որ Թուրքիայի ազդեցությունը հասավ այն գագաթնակետին, որը վնասում է պետական քաղաքականությանը:

Պարոն նախագահ, հավանաբար, Դուք կընթերցեք այս նամակը, եթե ժամանակ գտնեք: Ֆրանսահայերը մտադիր չեն կրկին անգամ զոհ դառնալ: Հայոց ցեղասպանության 96-րդ տարելիցի և Հայոց ցեղասպանության ժխտման քրեականացման մասին օրենքի քվեարկության շեմին Ֆրանսիայի հայ համայնքը կոչ է անում Ձեզ կատարել խոստումը»:

Հասարակություն



1.5 միլիոն ծառ, 1.5 միլիոն նահատակ

2011-04-20

Հարկ ենք համարում նշել, որ մեր համատեղ առաջին ծառատունկը տեղի էր ունեցել 2010 թվականի նոյեմբերի 13-ին, Նորքի 5-րդ զանգվածի սբ.Սարգիս եկեղեցու շրջակայքում: Այս տարի՝ ապրիլի 16-ին, Մփյուռքահայ ուսանողների խորհուրդը Համաշխարհային հայկական կոնգրեսի Երիտասարդական կազմակերպությունների ասոցիացիայի հետ միասին ծառատունկ կազմակերպեցին Ծիծառնակաբերդի

հարակից տարածքում, տնկելով շուրջ 300 ծառ և հիմնելով անմեղ նահատակների հիշատակը հավերժացնող փոքրիկ պուրակ:

Ծառատունկն սկսվեց առավոտյան 10-ին և տևեց մոտավորապես 2 ժամ: Ծառատունկին ներկա էին նաև Ռուսաստանի հայերի միության և Համաշխարհային հայկական կոնգրեսի նախագահ Արա Աբրահամյանը և ՀՀ Մփյուռքի նախարարի տեղակալ Վարդան Մարաշյանը: Նրանք նույնպես իրենց մասնակցությունն ունեցան մեր այս կարևոր առաքելության իրականացմանը, ինչը, իհարկե ավելի շատ ոգևորեց մասնակիցներին և մեծ թափ հաղորդեց գործին: Նշենք, որ ծառատունկի մասնակիցներն անսահման խնամքով և գորովով էին վերաբերում այս նախաձեռնությանը, և յուրաքանչյուրը ձգտում էր հնարավորինս շատ ծառ տնկել և իր հարգանքի տուրքը մատուցել

Ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակին:

Ծառատունկն իրականացնելուց հետո մեր խորհրդի անդամերն ուղևորվեցին Ցեղասպանության թանգարան, իսկ անմար կրակի մոտ ՍՈՒՄ անդամներից մեկը՝ Ռուզաննա Էլչյանը, արտասանեց Հայոց Մեծ Եղեռնին նվիրված բանաստեղծություն, ինչը բոլոր ներկաների մեջ մեկ անգամ ևս արթնացրեց բուռն հայրենասիրություն և միևնույն ժամանակ անսահման զայրույթ՝ ոճիրն իրականացողների հանդեպ:

«Մենք ուրախ ենք, որ Ռուսաստանի հայերի միությունը և Համաշխարհային հայկական կոնգրեսը նախաձեռնել է այս չափազանց կարևոր շարժումը և մենք պատրաստ ենք շարունակել համագործակցել այս երկու համահայկական կառույցների հետ», - նշեց Սփյուռքահայ ուսանողների խորհրդի նախագահ Սամվել Մկոյանը:



Լրացավ մեծանուն հայ լրագրող Հարություն Փարիկյանի 100-ամյակը

2011-04-20

Լրացավ վաստակաշատ լրագրող Հարություն Փարիկյանի ծննդյան 100 ամյակը: Ծնվել է 1911 թ. ապրիլի 8-ին Վան քաղաքում: Հրաշքով փրկվելով թուրք հրոսակների սրից, ոտքով անցնելով վտանգներով լի, անասելի դժվար ճանապարհ՝ ընտանիքն իր հանգրվանը գտավ Հայաստանում: Այստեղ նա ստացավ նախնական կրթություն, այնուհետև 1938թ. ընդունվեց Երևանի պետական մանկավարժական ինստիտուտ: Սակայն չհասցրեց այն ավարտել և երբ 1941թ. սկսվեց Մեծ Հայրենականը, Փարիկյանն առանց երկմտելու որպես կամավոր մեկնեց ռազմաճակատ: Հայկական Թամանյան 89-րդ դիվիզիայի շարքերում ճաշակելով պատերազմի հաղթական ավարտի բերկրանքը, հասավ մինչև Բեռլին և տուն վերադարձավ կրծքին

Կարմիր աստղ շքանշան և բազմաթիվ մեդալներ: Պատերազմից հետո շարունակեց իր ուսումը և գերագանցության դիպլոմով ավարտեց աշխարհագրական ֆակուլտետը: Այդ օրվանից նվիրվեց լրագրողի չափազանց հետաքրքիր և պատասխանատու գործին:

1949-ից սկսած աշխատել է Արտասահմանի հետ մշակութային կապերի հայկական ընկերության՝ Մովսեսյան Հայաստան ամսագրում և գործի բերումով հաճախ շփվել է հայ գրականության մեծ վարպետների՝ Ավետիք Իսահակյանի, Դերենիկ Դեմիրճյանի հետ, վայելել նրանց մտերմությունը, լսել նրանց իմաստուն խոսքերն ու զրույցները: Դերենիկ Դեմիրճյանը հաճախ էր սփյուռքի հարցերով գալիս ընկերություն, ամեն կերպ ուզում էր սատար լինել մեր եղբայրներին ու քույրերին, որոնց կապը հայրենիքի հետ օրեցօր ամրապնդվում էր:

Հ. Փարիկյանի լրագրողական և կազմակերպչական շնորհքն ավելի լայն դրսևորվեց Հայկական հեռագրական գործակալությունում և հատկապես ՀՍՄՀ հեռուստատեսության և ռադիոհաղորդումների պետական կոմիտեում, որտեղ աշխատել է 1968 թվականից՝ որպես ինֆորմացիայի գլխավոր խմբագրության գլխավոր խմբագիր և ապա ռադիոյի ծրագրերի դիրեկտոր:

Նա լրիվ տիրապետում էր ինֆորմացիայի տեխնիկային և միշտ պահանջում էր, որ այն լինի հակիրճ, ճշգրիտ և բովանդակալից: Հ. Փարիկյանը ԽՍՀՄ ժուռնալիստների միության անդամ էր, 1978թ. արժանացել է Հայկական ՄՍՀ վաստակավոր ժուռնալիստի պատվավոր կոչմանը: Նրա գործերից հատկապես ուշագրավ են Երեք ժամ մարշալ Բաղրամյանի մոտ ռադիոակնարկը, որն արժանացել է հանրապետության Ժուռնալիստների միության մրցանակին, 'Արուս' հայկական արագացուցիչ գիտահանրամատչելի հոդվածը և այլն:

Որտեղ էլ որ նա աշխատել է՝ շրջանային թերթում, ՀԿԿ Կենտկոմի մամուլի սեկտորում, Կուսակցական կյանք, Սովետական Հայաստան՝ ամսագրերում, միշտ աչքի է ընկել կուսակցական սկզբունքայնությամբ ու նվիրվածությամբ: Հարություն Փարիկյանն իր մահկանացուն կնքեց 89 տարեկան հասակում: Նրա կյանքի նպատակը կարելի է ամբողջացնել Ավետիք Իսահակյանի խոսքերով՝ Միբեցեք հայ ժողովրդի կուլտուրան, որը հենված է չորս սյուների վրա՝ լեզվի, գրականության, ճարտարապետության և երաժշտության: Ամեն կերպ զարգացրեք այն՝ ի բարօրություն մեր ստեղծագործ ժողովրդի:

Ուկրաինայում բազմաթիվ միջոցառումներով կհարգեն Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը

2011-04-19

Ցուցադրությունից առաջ Analitika տեղեկատվական գործակալության փորձագետ Երվանդ Երվանդյանը պատմել է Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանության պատմության մասին, ինչպես նաև Բաքվում, Մուսկովյանում և Մարաղայում հայերի ջարդերի մասին: Ապրիլի 20-ից միջոցառումներ են նախատեսված Միսֆերոպոլում, Օդեսայում, Դոնեցկում: Ապրիլի 23-ին Օդեսայում տեղի է ունենալու պատմաբան, Analitika.at.ua-ի փորձագետ Դավիթ Դավթյանի գրքի շնորհանդեսը՝ «Հայոց ցեղասպանությունն Օդեսայի բնակիչների աչքերով»:

Ռուսաստանի հասարակությունը հարգանքի տուրք կմատուցի Հայոց ցեղասպանության զոհերին

2011-04-19

Միջոցառումն անց է կացվում «Ռուս-հայկական համագործակցություն» կազմակերպության կողմից ՌԴ-ում Հայաստանի դեսպանատան հետ համատեղ, «Ջավախքի որդիները» կազմակերպության աջակցությամբ:

Միջոցառման պաշտոնական մասում հանդես կգան քաղաքական գործիչներ, դիվանագետներ ու հասարակական գործիչներ: Երեկոյի ընթացքում հանդես կգա Ռուսաստանի Ցուրլովի անվան պետական ակադեմիական երգչախումբը: Այդ միջոցառմամբ ռուս հանրությունը հարգանքի տուրք կմատուցի Հայոց ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակին:

The Financial Times. Կոտորածը Դիարբեքի նահանգում սատանայական մասշտաբների է հասել

2011-04-18

Երբ կայսրությունները պատերազմի մեջ մտան, Ռուսաստանը զգաց Օսմանյան կայսրության վերջնական պառակտումն առաջացնելու հնարավորությունը: Օսմանները 1911-1913թթ. Լիբիական և Բալկանյան պատերազմներում կորցնելով իրենց տարածքի մեկ երրորդն ու բնակչության մեկ հինգերորդը՝ եզրակացրեցին, որ պետությունը փրկելու համար շատ ավելի ազդեցիկ մոտեցում է պահանջվում: Պատերազմը միջհամայնքային լարվածություն առաջացրեց սահմանամերձ շրջաններում, որը պայթյունի վերածվեց այն պայմաններում, երբ և՛ ռուսական, և՛ թուրքական ուժերը քաղաքացիական բնակչության դեմ ուղղված հանցագործություններ էին կատարում: առավել ցավալի և հայտնի օրինակը հայերի տեղահանումն ու կոտորածն է Օսմանյան կայսրությունում 1915 թվականին:

Որոշ վայրերում, ինչպես օրինակ Դիարբեքի նահանգում, գրում է նա, «կոտորածը սատանայական մասշտաբների է հասել»: Ռեյնոլդսը գրում է, որ վիճակագրական տվյալների առավել հեղինակալի հետազոտությունը ցույց է տալիս, որ այն ժամանակ առնվազն 664 հազար հայ է զոհվել կամ նախապատերազմական Անատոլիայի հայ բնակչության 45%, սակայն որոշ գիտնականներ գտնում են, որ մահացության մակարդակն ավելի բարձր է եղել, և խոսում են առնվազն մեկ միլիոն զոհվածների մասին:

Մշակույթ



Պատմաբան Ռայմոնդ Կեռքյանը ներկայացնում է «Հայոց ցեղասպանություն. Ամբողջական պատմություն» գիրքը

2011-04-23

Գրքում բերվում են արխիվային փաստաթղթեր, ականատեսների վկայություններ, պարզաբանվում է Հայոց ցեղասպանության տեղը թուրքական ազգային պետության ստեղծման գործում:

Հեղինակը նաև դիտարկում է բռնագաղթն ու մեղավորներին դատելու փորձերը: «Այսօր սա ամենամբողջական գիրքն է 1915թ. Հայոց ցեղասպանության մասին: Ռայմոնդ Կեռքյանը նկարագրում է այն մահվան ուղին, որով անցան 1,5 մլն հայերը Օսմանյան կայսրությունում», - գրում է Le Monde-ը:

Կեռքյանը պատմություն է դասավանդում Փարիզի Մեն-Դենի համալսարանի Աշխարհաքաղաքականության ֆրանսիական ինտիստուտում, «Նուբարյան» գրադարանի տնօրենն է ու Հայաստանի պատմության մասին գրքերի հեղինակը: Նա նաև «Հայ ընդհանուր բարեգործական միություն՝ պատմության 100 տարի» գրքի հեղինակն է:



Թբիլիսիի հայկական թատրոնը կվերանորոգվի վրացական պետության միջոցներով

2011-04-22

Մասնավորապես Ռուռուան Հասմիկ Պողոսյանին տեղեկացրել է, որ մշակույթի նախարարությունը Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան հայկական պետական դրամատիկական թատրոնի շենքի ամրակայման ու վերանորոգման աշխատանքների իրականացման համար հատկացրել է 1 մլն.200.000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար և շուտով կսկսվեն շինարարական աշխատանքները (շենքը կառուցվել է 1936 թ. և վերանորոգվել է ընդամենը մեկ անգամ):

Բացի դրանից, Պետրոս Ադամյանի անվան դրամատիկական թատրոնի թատերախումբը վրացական իշխանությունների ֆինանսական աջակցությամբ հյուրախաղերով կմեկնի Ամերիկայի Միացյալ Նահանգներ՝ տեղի հայ համայնքի հրավերով:



Թուրք դերասանուհին խաղացել է Մեծ Եղեռնի մասին հայկական ֆիլմում

2011-04-21

Ինչպես նշում են կազմակերպիչները, սա առաջին ֆիլմն է, որտեղ ցեղասպանության թեման դիտարկվում է գաղթականների մի քանի սերունդների վրա դրա ունեցած ազդեցության տեսանկյունից, և առաջին անգամ հայկական ֆիլմում նկարահանվել է թուրք դերասանուհի:

Ֆիլմի նկարահանումները կատարվել են Հայաստանում, ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Արևմտյան Հայաստանում (Թուրքիա): Գլխավոր դերերում նկարահանվել են տարբեր երկրներից հրավիրված դերասաններ՝ Ժան-Պիեռ Նշանյան (ԱՄՆ), Արեն Վաթյան (ՌԴ), Արևիկ Մարտիրոսյան (Ֆրանսիա), Գյունըշը Զան (Թուրքիա), Կարեն Զհանգիրյան:

Ֆիլմի բեմադրող ռեժիսորներն են Արտակ Իզիթյանը և Վահան Ստեփանյանը, սցենարիստներ՝ Արմեն Վաթյան և Արեն Վաթյան, բեմադրող օպերատոր՝ Ռուբեն Շահբազյանց, բեմադրող նկարիչ՝ Գագիկ Բաբայան: Երաժշտությունը գրել է Հայկոն:

Իրադարձությունները համայն հայության համար ողբերգական 1915թվականի հետևանքներն են, որ ծավալվում են Գարապետ Փամբուկյանի ընտանիքում: Նրանք Ամերիկա ներգաղթած հայերի 4-

րդ սերունդն են ներկայացնում և կանգնած են «Ամերիկա» կոչվող վիթխարի բազմազգ խառնարանում ընդհանուրին միաձուլվելու վտանգի եզրին. մի կողմից որդին՝ ով ըմբոստանում է հոր ձեռնարկած արմատները պահպանելու փորձերի դեմ, մյուս կողմից թոռը, ով սիրահարվել է թրքուհուն: Ութսունամյա Գարապետը, որի մայրը հրաշքով փրկվել է եղեռնից, ձգտում է ամեն կերպ իր ամերիկանացված սերնդի մեջ արթնացնել ու ամրացնել կորուսյալ Հայրենիքի հետ կապը, միայն այդպես նա կկարողանա փրկել ընտանիքը օտարացումից և բաժանումից: Հանդիսատեսը ֆիլմը դիտելու հնարավորություն կունենա ապրիլի 24-ից:

Բեյրութի «Վահե Սեթյան» հրատարակչությունն առաջին անգամ մասնակցում է Գրքի երևանյան տոնավաճառին

2011-04-21

Գրքի երևանյան 7-րդ տոնավաճառին այս տարի մասնակցում են ավելի քան 30 հրատարակչություններ, որոնք ներկայացնում են տարբեր բովանդակության հայերեն գրքեր՝ հեքիաթներ, գեղարվեստական գրականություն, բառարաններ, ճանաչողական և այլ գրականություն: Ցուցահանդեսը կազմակերպվել է Հրատարակիչների ազգային ասոցիացիայի կողմից: Բացի Լիբանանից, տոնավաճառին մասնակցում է նաև Իրանի Իսլամական Հանրապետության մշակութային կենտրոնը, որը ներկայանում է 78 անուն մանկական գրականությամբ:

Լուսին Դինքը ֆիլմ կնկարահանի Վիլյամ Սարոյանի մասին

2011-04-20

Լուսին Դինքի՝ Հրանտ Դինքի եղբոր աղջկա ֆիլմը կպատմի 1964 թվականին Վիլյամ Սարոյանի Բիթլիս կատարած ուղևորության մասին:

Ըստ սցենարի՝ կնկարահանվի այն ճանապարհը, որը Սարոյանը անցել է մինչև Բիթլիս, կցուցադրվեն արխիվային լուսանկարներ, նյութեր և այսօրվա Բիթլիսը: Կլինի Սարոյանի երկու պատմվածքների բեմադրում, և վերջում նրա բոլոր հերոսները կհավաքվեն մեկ հարկի տակ՝ անիմացիայի միջոցով: Նախատեսվում է համագործակցություն հայ անիմատորների հետ:

Նախագծի պրոդյուսերը համշենահայ ռեժիսոր, «Ոսկե ծիրան» կինոփառատոնի մրցանակակիր Օզջան Ալփերի եղբայրն է՝ Մոնեթ Ալփերը:



Բրատիսլավայում Էկումենիկ պատարագ է մատուցվելու՝ նվիրված Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին

2011-04-19

Պատարագը մատուցվելու է հայկական առաքելական եկեղեցու ավստրիական թեմի և Սլովակիայի, Չեխիայի ու Հունգարիայի հոգևոր հովիվ՝ հայր Բարսեղ վարդապետ Պիլավյանի գլխավորությամբ, Սլովակիայի կաթողիկե, ֆրանտիշկանյան, ավետարանական, հունա-կաթոլիկական, ճիզովիտական եկեղեցիների մասնակցությամբ: Էկումենիկ պատարագից անմիջապես հետո կկատարվի ծաղկեպսակի մատուցման արարողություն Բրատիսլավայի կենտրոնում տեղադրված, 2004թ.-ին Սլովակիայի Ազգային Խորհրդի /ԱԽ/ կողմից՝ Հայոց ցեղասպանության բանաձևի ընդունմանը նվիրված, խաչքար-հուշակոթողի մոտ: Այնուհետև միջոցառման կազմակերպիչ Աշոտ Գրիգորյանը մասնակիցների պատվին կմատուցի ճաշկերույթ, հաղորդում է ԵՀՄՖ մամլո քարտուղարությունը:

Միջոցառմանը իրենց մասնակցությունը արդեն հաստատել են Սլովակիայի Ազգային Խորհրդի փոխնախագահ Պավոլ Հրուշովսկին, ԱԽ առաջին նախագահ Ֆրնատիշեկ Միկլոշկոն, առաջին վարչապետ Յան Չառնոգուրսկին, գլխավոր դատախազի տեղակալ Մարտին Լաուկոն, մի շարք դեսպանատների ղեկավարներ, այլ պաշտոնատար անձինք, լրագրողներ:

Հայ կատարողներով թուրքական երգչախումբը կարող է արժանանալ 2012-ի Խաղաղության Նոբելյան մրցանակի

2011-04-18

Երգչախմբի ղեկավար Յլմազ Օզֆիրատայի խոսքերով, երգչախումբում երգում են տարբեր մասնագիտությունների, կրոնական և էթնիկական պատկանելության տեր մարդիկ: Երգչախումբը կատարում է ինչպես թուրքական, այնպես էլ հայկական ժողովրդական երգեր:

Խաղաղության Նոբելյան մրցանակը շնորհվում է 1901-ից: 2010-ին նրա դափնեկիր է դարձել չինացի Լյու Սյաոբոն: Ավելի վաղ խաղաղության Նոբելյան մրցանակ են ստացել ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման և ԽՍՀՄ նախագահ Միխայիլ Գորբաչովը, ՀԱՀ նախկին նախագահ Նելսոն Մանդելան, ինչպես նաև ՄԱԳՍԵ նախկին ղեկավար Մոհամմեդ էլ Բարադեին, որին հիմա անվանում են եգիպտական ընդդիմության ղեկավար:

ԱՄՆ-ում կբացվի ամերիկահայ նկարիչ Արթուր Փինաջյանի անհատական ցուցահանդեսը

2011-04-18

Ցուցահանդեսը կկրի «Փինաջյան ‘Աբստրակցիայի հիմնադրման վարպետներից մեկը» խորագիրը և կշարունակվի մինչև հունիսի 19-ը: Ցուցահանդեսին ընդհանուր թվով կներկայացվի ողջ կյանքի ընթացքում արված 128 կտավ:

Արթուր Փինաջյանը ծնվել է 1914 թ-ին Նյու Ջերսիում: Նա սկսել է իր ճանապարհը 1930-ական թվականներին որպես անիմատոր: Մասնակցել է Երկրորդ աշխարհամարտին և արժանացել է Բրոնզե աստղի արիության համար:

Նրա աշխատանքները կարելի է բաժանել երկու ժամանակաշրջանի՝ Վուդսթոքյան (1950 - 1973) և Բեյվորթյան (1974 - 1999): Առաջին շրջանի աշխատանքներն աչքի են ընկնում ավելի հագեցած գունային գամմայով, իսկ երկրորդ շրջանը՝ ավելի նուր և թույլ գույներով:

Ապրիլի 24-ի նախաշեմին Թուրքիայում լույս կտեսնի Վերժինե Սվազյանի գիրքը Մեծ եղեռնի մասին

2011-04-18

850 էջից բաղկացած գրքի հայերեն և անգլերեն տարբերակները լույս են տեսել օրերս, և ինչպես հայտնեց Սվազյանը, գրքի թուրքերեն տարբերակը պարզապես մի փոքր ուշանում է: Հայերենից թուրքերեն թարգմանության հեղինակներն են Տիգրան Տեր-Օղորմյանը և Պետրոս Չաղիջյանը: Գիրքը լույս է տեսնելու հայտնի թուրք իրավապաշտպան Ռազր Զառաքուլույի «Բեյզե» հրատարակչատանը: Ինչպես հայտնեց PanARMENIAN.Net ի թղթակցին Սվազյանը, թարգմանությունը նախապես էր արվել և Զառաքուլուն իր 2011 թ. փետրվարին Հայաստան կատարած այցի ժամանակ սիրով համաձայնվեց լույս ընծայել գիրքն իր տպագրատանը:

Վերժինե Սվազյանի «Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ» գիրքը ընդգրկում է Հայոց ցեղասպանության ականատեսներից և նրանց երեխաներից գրառված Եղեռնի մասին հուշերը, պատմական երգ-վկայությունները, որոնք հեղինակը գրի է առել 1955 թ.-ից սկսած: Բացի վերը նշվածներից, գրի են առնվել 5 արաբ հեղինակների հիշողություններ, ովքեր Դեր-Ջոր անապատից ընդունել են հայ գաղթականներին: Օգտագործվել են նաև ՀՀ ԳԱԱ Ցեղասպանության ինստիտուտի որոշ արխիվներ: Ընդհանուր թվով Վերժինե Սվազյանը հավաքել է 700 միավոր վկայություն: Այս ամենից բացի, գրքում ընդգրկված են նաև ամփոփումներ, համառոտագրություններ, ծանոթագրություններ, օտարալեզու բառարան, թեմատիկ, անձնանունների, տեղանունների ցուցիչներ, 288 միավոր լուսանկար և քարտեզներ: